

WJEN

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆՏԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԵՐ ՆՈՐ ՀԱՍՑԷՆ Է

I. FRANK,

32, CHESTERTON ROAD,

(ENGLAND).

LONDON, W.

ՈՌԻՍ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԸ ԿՈՎԿԱՍԻ ՄԱՍԻՆ

Բ

Այս յօդուածին առաջին մասին մէջ, վասնաւորապէս ուշադրութիւն հրաւիրեցինք Կալիցին իշխանին Չարին ուղղած պաղտնի տեղեկագրին մէկ կարեւոր հատուածին վրայ որ կը լուսաբանէ ուստի գիւտանալիտութեան ըրած ջանքերը՝ բոնի ետ զրկելու համար սուլթանին հայրախընամ կառավարութիւնէն Ռուսիա փախած հայ գաղթականները: Այս նշանաւոր պաշտօն սգիրը սակայն ընդհանուր շահեկանութիւն ունեցող շատ մը սրբիշ կէտեր կը բովանդակէ, որոնք ցոյց կուտան ուստի քաղաքականութեան եւ վարչութեան մասնաւոր մէթոտները եւ ոգին, այնպէս ինչպէս կը պարզէ զանոնք անվիճելի պարկեշտութեան տէր և արտասովոր կերպով լուսավիտ համբաւուած ընդհանուր-կառավարիչ մը:

Կալիցին իշխանին կարծիքով, Կովկասի էն կարեւոր խնդիրներէն մին է արքունի գիւղացիներուն կամ պետական հողերուն վրայ հաստատուած ուստի գաղթականներուն կացութիւնը: Կովկասի գրաւումէն ի վեր՝ այս մասին գեոօրէնք մը հրատարակուած չէ: Երկու մասնախումբ, մին թիֆլիս 1892ին, միւր Բեդրպուրկ՝ Արքունական Հողերու նախարարութեան ներքեւ՝ 1896ին, զբաղեցան այդ խնդրով, եւ իրենց աշխատութիւնէն վերջապէս օրինագիծ մը քաղուեցաւ, որ 1898ին Կալիցին իշխանին հաղորդուեցաւ, անոր կարծիքը առնելու համար: Իշխանը տեսաւ որ այդ օրինագիծը գաղթականներուն արդի հողային դրութեան մէջ ընդհանուր փոփոխութիւն մը կ'առաջա-

դրէր՝ առատ հող ունեցողներուն բաժնէն մաս մը կարելով եւ սրբիշ գիւղերէ փոխադրուելիք գիւղացիներու տալով: Օրինագիծը նոյնպէս հողի որոշեալ բաժին մը կը հաստատէր ընդհանրապէս հողին տեսակին եւ առաւելութեանցը վրայ հիմնուած, որոնք կախում ունին ծովին սահեբեւայթէն ունեցած բարձրութիւնէն: Կալիցին իշխանը եւ իր խորհուրդը այս ծրագիրը մերժեցին երկու պատճառի համար: Նախ որ, արդի գաղթական գիւղացիներուն զբաւած հողերուն ձեռք դպցնելը՝ ծանր կնճոտութիւններ յառաջ պիտի բերէր և կրնար խոտովութիւններու առիթ տալ: Երկրորդ որ, մշակութեան և կլիմայական, տեղագրական եւ ուրիշ պայմաններու մեծ պէսպիսութեանը պատհասուելու, կարելի չէ ու է ընդհանուր կանոն հաստատել գիւղացիներուն վրայ հողին տարածութեանը մասին՝ առանց անարդարութիւն գործելու շատ պարագաներու մէջ: Հոգալիցին բաժիններու տարածութեան մեծ պէսպիսութիւն մը անհրաժեշտ է զանազան վայրերու գեղացիներուն բարեկեցութեանը համար: Ասիկա ապացուցուած է Քուլթայեթի, Թիֆլիսի, Էլիզաւէթբուրի, Երեւանի եւ Պաքուի նահանգներուն մէջ գիւղացիներուն հողային բաժինները սրբիշ զանազան կանոնադրերով: Ասկից զատ, կառավարական երկրաչափական աշխատութիւնը գեո անկատար է, և տակաւին յայտնի չէ թէ ո՛րչափ հող տրամադրելի պիտի մնայ նոր գաղթի ուստի գաղթականներուն համար: Կալիցին իշխանը հետեւաբար ինք նոր առաջարկ մը կ'ընէ, այս մասին իր խորհրդին անգամներուն կարծիքը առնելով: Եւ այս կ'առաջարկէ որ արքունի գեղացիներուն տեղաւորումը կատարուի իւրաքանչիւր նահանգի կամ գաւառի հանգամանքներուն համաձայն, իսկ հողային բաժիններուն միջին չափը որոշուի նոր օրէնքին հրատարակուելէն յետոյ, փոխանակ օրէնքին մէջ մտցնելու առիկա: Ասկից զատ, հողային բաժիններուն չափը տեղական վարչութեան կողմէ չորոշուի, հապա Բեդրպուրկ, օրէնսդրական սովորական ձեւակերպութիւններէն առնելով, ընդհանուր կառավարչին եւ Արքունի Հողերուն ու Երկրաչափութեան նախարարին միացեալ յանձնարարութեանը վրայ: Ընդհանուր կառավարիչը, իր խորհրդովը, վճռէ այս կարգադրութիւններէն առաջ եկած ու է վճռ. առով, ընդհանուր կառավարիչը նորէն պիտի ունենայ յառաջադրուի Կովկասի փոխարքային վայելած իշխանութիւնը՝ վճռելու

համար անհասանելի հողերուն վրայ գիւղացիներուն վէճերը: Կալիցին իշխանը կը յայտարարէ թէ ստիպողական անօրինութիւն մըն է ասիկա, իբր լաւագոյն միջոցը՝ Ան-
 ցրիովկասի մէջ ուստի հողատիրութիւն մտցնելու եւ ուստի գիւղացիներ տեղաւորելու: Միանգամայն փափաք կը յայտ-
 նէ որ իր Բեգրպուրի գտնուած միջոցին խնդիրը վիճա-
 բանուի եւ որոշուի մէկանց:

Յիշեալ առաջարկութեան մասին իշխանին տուած բացատրութիւններուն գիմացը, Չարը գրած է. «Յոյրո-
 վին նպատակայարմար» եւ խնդիրը Բեգրպուրիի մէջ ան-
 միջապէս որոշուելու փափաքին գիմաց՝ «Կը հաւանիմ»:

Կալիցին իշխանը յետոյ կը յիշէ Անցրիովկասի իս-
 լամ վայրերուն մէջ անհասանելի հողին վրայ հաստատ-
 ուած արքունի գիւղացիներուն կացութիւնը, որ շա-
 տանցուան խնդիր մըն է: Գիւղացիները հողին վարձքը
 կը վճարեն՝ բերքէն բաժին հանելով հողատէրերուն: Արդ,
 պէտք է սրտշել գիւղացիներուն հիմակուան ունեցած
 պարտքը այդ բնիկ հողատէրերուն: Կալիցին իշխանը կը
 գանգատի թէ 1888 թին Կովկասի նախկին ընդհանուր կա-
 ուավարիչ Տոնտուրոֆ-Քորոսաքոֆ իշխանը այդ մասին
 հարկ եղած բոլոր տեղեկութիւնները հաղորդած է Ներքին
 գործերու նախարարութեան, եւ թէ 1898 թին միայն թըղ-
 թերը թիֆլիս վարձուեցան՝ լուսանցքներուն վրայ Երկրա-
 գործութեան եւ Ելմտական նախարարներուն գիտազուլութիւն-
 ներովը: Այս հատուածին գիմաց Չարը հեգնական «Ան-
 շուշտ» մը գրած է:

Կալիցին իշխանը կը յարէ թէ Անցրիովկասի գաղթա-
 ւորումը առաջ տանելու մասին թիֆլիսի իշխանութեանց
 ջանքերուն մեծապէս արգելք եղած են տեղական տեղե-
 կագիրներ որոնք կը յայտարարեն թէ նորեկներու համար
 ա՛լ հող չկայ: Եւ սակայն, Արքունի Հողերու նախարա-
 րութեան պաշտօնեաներու կողմէ վերջերս կատարուած
 քննութիւններ ցոյց կուտան թէ հաւանօրէն դեռ շատ հող
 կայ ուստի գաղթականներու համար: Ասոր վրայ, տեղա-
 կան կառավարիչներուն հրահանգ տրուած է ստուգել իրո-
 ղութիւնը, որպէս զի գաղթական գեղացիները նորէն չեն-
 թարկուին այն շարժարածքներուն եւ կործանումին որոնց-
 յաճախ զո՛հ կերթան՝ հեռուոր վայրեր ճամբորդելով, ա-
 ոանց առաջուց գիտնալու թէ ազատ ու յարմար հող պի-
 տի գտնուին: Այդ աշխատութիւնը կատարուելուն պէս, Կա-
 լիցին իշխանը պիտի խնդրէ որ 1889 յուլիս 13 ՉՅի օ-
 րէնքը, որուն համեմատ գիւղացի մշակներ եւ արհեստա-
 ւորներ կամաւորապէս կը գաղթեն եւ կը հաստատուին
 պետական հողերու վրայ, Կովկասի մասին ալ գործադրե-
 լի ըլլայ:

Երբ Կալիցին իշխանը իր պաշտօնատեղին հասաւ,
 ուստի գիւղացիներէ շատ մը դիմումներ ստացաւ Քաւթա-
 յիսի նահանգին Արգուին եւ Պաթում գաւառներուն մէջ
 ազատ հող ունենալու համար: Այդ խնդրագրերը Արքունի
 Հողերու եւ Երկրագործութեան նախարարին ղրկուեցան,
 որ պատասխանեց թէ պէտք է նախ եւ առաջ այդ դաւա-
 ներուն չքաւոր ժողովրդին հողագին բաժինները կարգա-
 ղել, ու անկից յետոյ տեսնել թէ մըջափ հող կը մնայ նոր

գալիք ուստի գաղթականներու համար: Հակառակ ասոր,
 ընդհանուր կառավարիչը պէտք եղածին չափ պարագ հող
 գտաւ այդ խնդրարկուներուն տալու համար կա՛մ ձրի
 կա՛մ պարգապէս անուանական վարձքով մը, առանց պչե-
 լու տեղացիներուն հողին կամ իրաւունքներուն: Անհրա-
 ժեշտ էր անյապաղ այդպէս ընել իբր առժամանակեայ կար-
 գազրութիւն մը, մինչև որ տեղացիներուն հողային խնդիրը
 վերջապէս կարգադրուի, եւ որպէս զի այդ ուստի գաղթա-
 կանները ալ աւելի նեղութիւններու եւ շարժարանքներու
 չենթարկուէին: Թէ՛ Կարսի եւ թէ՛ յիշեալ գաւառներուն
 մէջ հողային խնդրին կարգադրութիւնը այսպէս ձգձգելով,
 կ'ըսէ տեղեկագիրը, երկրին այդ մասերը զուրկ կը մնան
 «քաղաքակաւ տեսակետով կատարելապէս վատանելի
 առաւ ազգաբնակչութեան մը»: Կալիցին իշխանը նմանապէս
 դիտել կուտայ որ բերաւոր հայ գաղթականներ վերջին
 մէկ քանի տարիները եկած հաստատուած են յիշեալ գա-
 ւառներուն չքաւոր ժողովրդին մէջտեղ, առանց ու եւ հո-
 ղային փոխանցում կատարելու. ասիկա ցոյց կուտայ թէ
 տեղացիները այդէն պէտք եղածին չափ հող ունին: Այս
 տեսութիւնները, կ'ըսէ տեղեկագիրը, Արքունի Հողերու
 նախարարին ներկայացուեցան, բայց տակաւին վերջնա-
 պէս որոշում մը տրուած չէ: Չարը լուսանցքին մէջ տե-
 ղեկութիւններ կը խնդրէ այս մասին, հաւանօրէն յիշեալ
 նախարարէն:

Ասիկց յետոյ, Կալիցին իշխանը ձեռք կ'առնէ Անցր-
 կովկասի մէջ օտարականներուն հող գնելու խնդիրը: Կը
 յայտնէ թէ վերջերս ընդհանրապէս օտարականներուն եւ
 մասնաւորապէս թիւրքիայէն փախած հայ գաղթական-
 ներուն մէջ ձգտում մը կայ հող գնելու, որուն դէմ պէտք
 է զգուշական արգելիչ միջոցներ ձեռք առնել երբ դեռ ժա-
 մանակ է: — Չարը լուսանցքին մէջ կը գրէ. «Ես ալ
 անհրաժեշտ կը գտնեմ այդ անօրինութիւնները»:

Կալիցին իշխանը կ'ընդունի թէ Կովկասի մէջ օտար
 հպատակներու ունեցած հողին տարածութիւնը շատ փոքր
 է. բայց երկաթուղիներուն արագ յառաջացումը եւ երկ-
 րին բնական հարստութիւնը անխուսափելի կերպով
 կովկաս պիտի քաշեն ձեռներէց օտարականներ, որոնք
 անշուշտ իրենց ուշադրութիւնը հողին պիտի դարձնեն, որ
 խարխիւն է ամէն մեծ ճարտարագործութիւններու: Մի-
 ենոյն ատեն, Կովկասը այնպիսի կացութեան մը մէջ չէ՛
 որ կարենայ իր գործը տեսնել առանց օտար աշակցու-
 թեան: Ռուս զբոսաշրջի չզոյլութիւնը, ճարտարագործու-
 թեանց տկար զարգացումը, արհեստագործական վարժու-
 թեան պակասը, երկրագործութեան նախնական գրութիւնը,
 ինչպէս նաեւ գիւղացի ժողովրդին թոյլ ու ծոյլ նկարա-
 գիրը՝ տակաւին բաւական արգելք պիտի ըլլան երկրին
 անտեսական յառաջդիմութեան: Այս պարագաներուն
 մէջ, պէտք չէ մերժել օտարականներուն աշակցութիւնը՝
 անպայման կերպով արգելելով օտար հողատիրութիւնը,
 քանի որ ասիկա անմիջապէս պիտի կեցնէր օտար դրա-
 մագլխին յարածուն հոսանքը: «Ասոր առաջքը առնելու

համար, կ'ըսէ կալիցին իշխանը, կ'առաջարկեմ որ 1887 մարտ 14ի օրէնքը կալիկասի մասին ալ գործադրելի ըլլայ, պայմանաւ որ ընդհանուր կառավարիչը, Ելմտական եւ Երկրագործական նախարարներուն հետ համաձայնութեամբ, արտօնութիւն ունենայ այդ արդիւիք օրէնքներուն մասին բացառութիւններ ընելու ա'յն պարագաներուն մէջ, երբ օտարականներուն գնած հողը գործարանի, շահագործութեան կամ ուրիշ ճարտարագործական օգտակար ձեռնարկներու պիտի յատկացուի:»

Այդ 1887ի օրէնքը հրատարակուեցաւ՝ Բոլոնիայի մէջ օտարականներուն հողատիրութիւնը արգիւելու համար: Կալիցին իշխանին յիշեալ առաջարկութիւնը ընդունուեցաւ, եւ 1898 յունիսին կայսերական հրովարտակ մը Սիւ ծովու եզերքին եւ Թիւրք ու պարսիկ սահմանագլուխներուն կից գաւառներուն համար ալ գործադրելի հոչակեց այդ օրէնքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒԹԻՒՆՆԸ

Էրզրումի սեզլիսիակե հիշատակու Պ. Մեսի Էրզրումի 1898ի առեւտրական կացութեան մասին հետեւեալ շահեկան տեղեկութիւնները հաղորդած է սեզլիսիակե կառավարութեան:

Էրզրումի առուտուրին վերականգնուածը, որ 1897ին զգալի էր, 1898ին ալ աւելի շեշտուեցաւ: Այս շարունակական յառաջգիծութիւնը վերագրելու է տիրող յարաճուն վստահութեան, որ արդիւնք է արդի պատուական կուսակալին՝ Բէուֆ փաշայի՝ ջանքերուն:

Նշաններ կան ցոյց տուող թէ վաճառականութիւնը, որ իսլամներուն ձեռքը անցած էր, նորէն քրիստոնեաներուն ձեռքը անցնելու վրայ է:

Վերջին երեք տարիներուն արտածումները եւ ներածումները հետեւեալներն են.

	Արտածում	Ներածում
1896 ին	148,510 անգլ. ոսկի	188,510
1897 »	167,660 »	214,030
1898 »	158,540 »	230,995

1898ի վաճառականութիւնը կրնայ իբր նշան մը ներկատուի թէ եօթը ութ տարի առաջուան միջինը նորէն ձեռք բերուած է: Սակայն այս համազումարը բնաւ չի հաւասարի 1890ին առջի շրջանին, որ շատ աւելի բարգաւաճ էր: Այս կողմերուն մեծ ու յարաճուն աղքատութիւնը յոյս չի ներշնչեր առեւտրական այս կացութեան անմիջական բարուղմանը:

Արտածումներուն նուազման պատճառը այն է որ,

անբաւական հունձքին պատճառաւ, 7000 ոսկիի նուազ արմտիք զրկուեցաւ Ռուսիա: Այլապէս, արտածումներուն համազումարը սովորական միջինին չափ էր:

1897ի բաղդատմամբ՝ Ֆրանսա հարիւրին 20 աւելի ապրանք զրկուեցաւ, եւ 1896ին բաղդատմամբ՝ հարիւրին 30 աւելի. այդ երկիրը զրկուած գլխաւոր ապրանքներն են մորթ, կաշի եւ կտաւատ:

Անգլիա ապրանք չի զրկուիր ասկից գրեթէ: Մեզի համար արժէք ունեցող տեղական անապրանքներն են մորթ, կաշի, մուշտակ եւ կտաւատ: Թէեւ հրապարակը շատ խոշոր չէ, բայց կարելի է աղէկ մուշտակ գտնել հոս, մասնաւորապէս արջու, ագուեսի, կուզի, ագեսի եւ գայլի:

Ներածումներուն մէջ 17,000 ոսկիի կամ 1897ին վրայ 8 առ հարիւրի յաւելումը կրնայ գոհացուցիչ նկատուիլ եթէ 1899ին շարունակէ կամ ալ աւելի բարձրանայ, մանաւանդ որ այս յաւելման հարիւրին 16էն աւելին անգլիական ապրանքներուն երեսէն է: Ասիկա սակայն չեմ կրնար նկատել իբր նշան մը թէ գործերը պիտի բացուին. հիմակ տեսնուած պղտիկ բարձրուածը պարզապէս ցոյց կուտայ թէ այս երկրին վաճառականութեան եւ ընդհանուր բարեկեցութեան ինչքան աղիտաբեր եղան առջի երեք ու կէս տարուան գէպքերը: Քիւրտիստանի արդի վիճակը, — սով վանի եւ ուրիշ նահանգներու մէջ, Քիւրտերը իրենք իրենց թողուած, և Հայերը աղքատացած, — շատերու կարծիքով՝ երբեք այսքան յուսահատական եղած չէր: — Անգլիական ապրանքներուն յաւելումը մասնաւորապէս թէյի եւ Մանչէսթրի բամբակեղէնի մասին է:

Թէեւ շատ մը հանքային հարստութիւն կայ, բայց եղած շահագործումը կարեւորութեան զուրկ է: Քանի մը թոնոս ածուխ կը հաւաքեն ասլիկն անդին, հողին մակերեսային ու այդ ալ զինուորական խումբերը կը սպառեն: Այս ածուխի արտադրումին գործնութեանը համար մեքենական միջոցներ չէ որ կը գործադրուին: Արհեստագործութիւնը դոյութիւն չունի հոս, և տարւոյն վեց ամիսները, ձիւնի եղանակին, ամբողջ ժողովուրդը անգործ կը մնայ:

Երկրագործութիւնը գլխաւոր զբաղումն է:

Յիշատակութեան արժանի հանրային գործեր չի կան: Թէեւ փորձած են ճամբաներ շինել բայց այս փորձերուն արդիւնքը գոհացուցիչ ըլլալէ հեռի է: Կառուցի մը Էրզրումէն մինչեւ Տրապիզոնի ձովեզերքը կը հասնի: Էրզրումէն մինչեւ Սիւ ծովու այդ եզերքը ճամբորդութիւնը գրեթէ շաբաթ մը կը տեւէ: Ապրանքներու փոխադրութեան գինը լիպրային վրայ բէսիի մը երեք չորրորդն է ընդհանրապէս: Շրջակայ ճանապարհները ու անոնք որ Տրապիզոն եւ Պարսկաստան կը տանին, կրնան ապահով համարուիլ, թէեւ արեւելեան կողմը պատահած է որ աւազակներ յարձակումներ ըրած ըլլան: Երկաթուղին դոյութիւն չունի:

Չմտը ընդհանրապէս արջառներու մէջ հիւանդութիւնը կը տիրէ, եւ ուրիշ տեղուանք այս հիւանդութիւնները միւս եղանակներուն մէջ ալ կը պատահին:

Էրզրումի նահանգին մէջ, ինչպէս ամբողջ Քիւրտիստանի մէջ հառարակաց առողջութիւնը կրնայ գոհացու-

ցիչ նկատուիլ, բացի այն քաղաքներէն ու գիւղերէն ուր աղտոտութիւնը որուն մէջ ժողովուրդը կ'ապրի շատ մը մահերու պատճառ կ'ըլլայ: Էրզրումի քաղաքը Փոքր-Ասիոյ ամենէն աղտոտ քաղաքներէն մէկն է եւ հետեւաբար քիչ անգամ կը պատահի որ համաճարակ հիւանդութիւններ չտիրեն հոն:

Կարելի չէ ըսել թէ երկրագործութիւնը զոհացուցիչ վիճակի մէջ է: Բնակիչներու մեծ մասը կը բաղկանայ Քիւրտներէ որ իրենց տաւարներուն արդիւնքէն ու իրենց քրիստոնեայ զրացիներէն զողջած ցորենովը կ'ապրին: Հայերը որ առեն մը շատ յաջող երկրագործներ էին, հիմա ցանկից չկարենալ գնելու վիճակի մէջ են, ինչ որ պատճառ կ'ըլլայ շատ մը լաւ հողերու անմշակ մնալուն:

Էրզրումէն 1898ին և 1897ին արտածուած գլխաւոր ապրանքներն են.

	1898ին	1897ին
Ցորեն	5000 Ո.	12000 Ո. Ռուսիա
Կտաւատ	3000 »	1500 » Ֆրանսա
Մորթ և կաշի	9610 »	8700 » »
Մուշտակ	11500 »	10500 » Ռուսիա
Չանագան ապր.	14200 »	15160 » Ռուսիա և Աւստ.
Գումար	43310 Ո.	47860 Ո.

Թիւրքիոյ զանազան կողմերէն.

	1898ին	1897ին
Ցորեն	2000 Ո.	2500 Ո. Տրապիզոն
Ոչխար	75000 »	78000 » Դամասկոս
Եղ և կոլ	17500 »	18500 » Կեսարիա
Չի	1200 »	1050 » Դամասկոս
Բատորմա	15000 »	15500 » Կ. Պոլիս
Չանագան	4530 »	4250 »
Գումար	115230 Ո.	119800 Ո.

1898ին և 1897ին Էրզրում ներածուած գլխաւոր ապրանքներն են.

Օտար երկիրներէ.

	1898ին	1897ին
Շաքար	23000 Ո.	22900 Ո. Ֆրանսայէն
Խահուէ	2800 »	3000 » »
Երկաթ	3300 »	3000 » Անգլիայէն
Պղինձ	2150 »	2000 » »
Ճերմակեղէն	15000 »	13000 » »
Պասմա	6000 »	4500 » »
Բամբակեղէն	18150 »	15890 » »
Բրդեղէն կմ. կտ.	4450 »	3820 » »
Կաշի	3000 »	2800 » Ֆրանսայէն
Բեղբուլ	5000 »	5000 » Ռուսիայէն
Եղ	3400 »	3600 » »

Ոչխար	5000 Ո.	5400 Ո. Ռուսիա
Չանագան ապր.	58420 »	52470 » Աւստ. և Ռուս.
Պարսկ. ապր.	35850 »	37680 » Պասկաստանէն
Գումար	185520 Ո.	175060 Ո.

Թրքական գաւառներէ.

	1898ին	1897ին
Մանուսա (տեղ. բաւալակէ ապր.)	13620 Ո.	12300 Ո. Արապկիրէն, Երզնկայէն, Են.
Չոր պտուղներ	2350 »	1850 » Պիթլիսէն, Խար. բերդ, Բալու. են.
Րիզայի ճերմակ.	1000 »	1100 » Րիզայէն
Այծի մորթ	2010 »	1600 » Վան, Պիթլիս, Մուշ եւայլն
Կաշի	1060 »	800 » Տիարպէքիրէն
Մուշտակ	6700 »	6400 » Խար. Պիթլի. են.
Չանագան ապր.	18735 »	14920 »
Գումար	45475 Ո.	38970 Ո.

Հետեւեալ ցանկը ցոյց կուտայ արտածութեանց և ներածութեանց համագումարը.

Արտածութիւն

	1898ին	1897ին
Անգլիա Ո. Ո.
Թրքական գաւառները	115230 »	115550 »
Ֆրանսա	12610 »	10200 »
Աւստրիա	1000 »	1000 »
Ռուսիա	29700 »	36660 »
Չուիցերիա » »
Պարսկաստան » »
Չանագան երկիրներ »	4250 »
Գումար	158540 Ո.	167660 Ո.

Ներածութիւն

	1898ին	1897ին
Անգլիա	49050 Ո.	42210 Ո.
Թրքական գաւառները	45475 »	38970 »
Ֆրանսա	30910 »	28980 »
Աւստրիա	31050 »	28700 »
Ռուսիա	28900 »	29490 »
Չուիցերիա	3800 »	3400 »
Պարսկաստան	35850 »	37680 »
Չանագան երկիրներ	5960 »	4600 »
Գումար	230995 Ո.	214030 Ո.

ՀԱՅ ՏԱՌԱՊԱՆՔԷՆ

ՓՐԿՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿԸ

Գարեգին հիշարիկն գաշարը պարպեց, ոչ պահ մը շուշ, աչքերը ձեղձակ տնկած մտածկոտ սպասեցին վերջը, ինձի դարձաւ ոչ շարունակեց:

Երբ շոգենաւ ժօտեցաւ Թէյմզի քարափին, բնագոյն դարտը մղուեցայ վրաս խուզարկելու: Չեղբերս գահալիժօրէն մխրճուեցան զրպաններու անշափելի պարապին մէջ: Ու տօքերէն անդին, Քաղաքը կը ցցուէր դիմացս վիթխարի, սպանակահան:

Օձիկս դարձուցի ու զուրս ելայ: Խոնար, սպրդող ցուրտ մը սկսաւ մարմինս թափանցել երբ քարափին վրայ առաջին քայլս առի:

Քանի մը օր Լնտոնի յաւիտենական մառախուղին մէջ սուլալուկ թափառելէս վերջը, առտու մը, Փրկութեան Բանակը ինկայ ուժառայառ:

Տրտում բայց հաճելի անակնկալ մը կը սպասէր հոն ինձի: Հայեր էին, գաւառացի փախստական Հայեր, Փրկութեան Բանակին Մարտիլիաի մասնաճիւղին կողմէ Լնտոնի կեդրոնը զրկուած: Դեռնոր հասեր էին Բարիզէն: Երբ սրահէն ներս մտայ, փայտէ խոշոր սեղանի մը շուրջը բոլորուած տարտամ նախաճաշ մը աննելու վրայ էին, «Փրկչուհիներու» հսկողութեանը տակ:

— Բարե՛ւ ձեզ...

Ամենքը մէկ ոտքի ելան, իրենց բիրտ, ազնիւ ձեռքերը երկնցուցին, ճովերբին տեղ ըրին նստեցուցին զիս, ու կարգաւ բարի զալուստ մաղթեցին ինձի:

Իրենց բազմակից նորեկ Հայու մը ներկայութիւնը ցնցած էր այդ յոգնած մարդիկը, խորունկ ու անձկագին հետաքրքրութիւններ արթնցուցած էր անոնց մէջ, ու բանգէտ քաղցրեղի կերպարանքէս քաջալերուած սկսան ամէն կողմէ ահագին հարցումներ ուղղել ինձի, զմայլելի լրջութեամբ մը, ազգային ճակատադրին, քաղաքական կնճառոտ ենթադրութիւններու, Հայաստանի... «ժօտալուտ փրկութեանը» մասին: Իրենց սրտատուջ միամտութիւնը, իրենց անվկանդ հաւատքը չէր կրնար զիս անտարբեր ձգել. կը խոստովանիմ սակայն որ, հակառակ բոլոր բարեկամեցողութեանս, չկրցայ բնաւ գոհացնել զիրենց:

Բայց այդ մարդիկը կը յուսային, կը հաւատային կոր տակաւին... Ու ես, խղճի խայթի ու ամօթի կրճող ըզգացումով մը, ծածկեցի, ուրացայ անոնց իմ սեւ, իմ դժնդակ յուսահատութիւնս:

Անոնք ինէ աւելի տառապած էին...:

* * *

Երսուն հոգիի չափ կային: Ամենքն ալ Պօլսոյ Չարդերէն փախած էին, անգամ մըն ալ անհունօրէն հեռանալով իրենց ընտանիքներէն որոնք Անդին, Հայաստանի տեւական ու հաւաքական Չարդերուն մէջ կը մնային անշարժացած, — փճացած զուցէ, — փախուստի գաղափարին իսկ անկարող, այս կրկին անգամ պանդուխտ հայրերուն ու էրկիներուն էութիւնը բեռնաւորելով կարօտի ու անձկութեան կապարի պէս ճնշող ծանրութիւններով:

Ամենքը մէկ կը խօսէին հիմա: Արհաւիրքի ու խողխողման փուշ փուշ ընող պարմութիւններ ունէին անոնք պատրաստ շրթունքներնուն վրայ, հազար անգամ զուրցուած, դսց սորվուած պատմութիւններ, եւ զօրոնք տարապայման փութկոտութեամբ մը պիտի կրկնէին դիմացինին ելլող բոլոր Հայերուն:

Իրենց այդ յարատեւ փղձումի մարմաջէն տարուած, հետզհետէ կը բարբոթէին, իրար ընդմիջելով, իրարու բերնէ յափշտակելով, իրար սրբագրելով:

— Օ՛տ առ ալ բան մըն է որ... ես ատիկց գէշը դիտեմ...

Ու ամբողջ տողանցութիւն մը սպանութեան ու տանջանքի հաճելի պատկերներու:

Մրցումի պէս բան մըն էր ատիկա ուր անոնցմէ իւրաքանչիւրը կը նկրտէր քստմեկիւն, եղբրականէն մէջ գերազանցել իր դիմացինը, աւելի անլուր, աւելի ահարկու մանրամասնութեան մը յաղթական յիշատակուովը: Ու այս բոլորը՝ ձեռքի անկեղծ ու այլանդակ շարժումներով ստորագծուած, արհամարհոտ ու հոյակապ նայուածքներով շեշտուած:

Չէ՛, ընկճուածներ չէին բոլորովին այդ քիչ մը առաջ լուռ ու զլիւխոր մարդիկը. ընդհակառակը, տարօրինակ կենդանութեան մը ապացոյցը կուտային կոր հիմա, իրենց քաշածն ու տեսածը ըսելու փափաքին մէջ դնելով տենդոտ խանդավառում մը որ զիս կը շուարեցնէր: Իրենց կորովին այս ողբալի արտայայտութիւնն ալ զիս չկրցաւ սակայն մխիթարել: Ա՛հ, եթէ միշտ լռէին իրենց ցաւերը...:

Բայց երկար չտեսեց այս տխուր մարզանքը: Իրենց իրարանցումին առջեւ իմ անտարբեր դիրքէս եւ ուշադրութեան պակասէս քիչ մը սրտմտած, սկսան մէկիկ մէկիկ վհատել ու կարճ կապել:

Այն ատեն, նեղացուցիչ լռութիւն մը խզելով, խօսեցայ իրենց ներկային վրայ, հարցուցի թէ ի՞նչ պիտի ընէին, ո՛ւր պիտի երթային:

— Ամերիկա՛... Ամերիկա՛...:

Ամնուն բերնէն այս բառը զուրս եկաւ ու ամենուն գէմքին վրայ յոյսի, զրեթէ վստահութեան ճառագայթում մը ցոլաց:

Ամերիկա՛...: Գաւառացի Հայ փախստականին համար տարօրինակ դիմութիւն մը, կարծես նախախնամական նշանակութիւն մը ունի այդ անունը: Երկարօրէն կը խօսի անոր վրայ, անխախտելի համոզումի շեշտով մը որ՝ Ամերիկան զեռ երազներուն մէջ միայն ընդնշմարած այդ մարդուն քով՝ կը սահմակէ քեզի:

Անդամ մը Տաճկաստանէն դուրս՝ ա՛յլ իր խելքը միտքը հոն կը վազէ, հոն կը մղուի իր բոլոր էութիւնը: Յրեկին իր քայլերը դէպի հոն կը կարծէ առնել շատ անգամ, ու գիշերները, քունին խաւար խորութիւններուն մէջէն դէպի հոն կը դառնայ, կը սեւեռի իր գոց նայուածքը: Ու այս բուն ու հետապնդող յաճախանքը կը տեւէ, մինչեւ որ յաջողի մէջ մը հոն նետել ինքզինքը:

Օ, կ'օգտէ որ ճամբու ծախքը տան. անկից անդին իր գիտնալիք բանն է: Վրաս է որ գործ կը գտնայ այնտեղ: Գործը չէ որ կը պակսի Ամերիկա: Արդէն ազգականներունի հոն որոնք շատոնց «դրամի տէր» են եղած...:

Դրամի տէր ըլլա՛լ... ահա՛ տիրական մտահոգութիւնը այս Հայերուն որ իրենց ցեղին արիւնին մէջէն, մինչեւ ծունկերնին թաթխուած, քալեր անցեր էին:

Վերջէն իմացայ իրենցմէ թէ մէջերնուն մէկը, յիսուանոց ծանրաբարոյ խարբերոցի մը որ ընտանիքովը կը ճամբորդէր, արդէն անդամ մը Ամերիկա գացած ու անկից հայրենիք վերադարձած էր, ու հիմա նորէն Ամերիկա կ'երթար... քանի մը հարիւր ոսկիով: Չուզեցի հաւատալ երբ ինծի ըսին թէ այս ճամբորդութիւնը ձրի ընելու համար, առիթէն օգտուելով, ան ալ միտ խեղճերուս հետ, Փրկութեան Բանակին զիմեր էր Մարսիլիա, հին, պատրուած լաթեր հագած, չքաւորի կերպարանք մը կեղծելով, ու կեղծել, մուրալ սորվեցնելով իր կնիկանը ու զաւիւրներուն...:

* *

Ամենքն ալ անհամբեր կը սպասէին որ շոգենաւ դնեն զիրենք Ամերիկայի համար: Բայց ժամանակը կանցնէր ու մեկնուածի աւետիսը հ'ուշանար:

Իրիկուան դէմ Փրկութեան Բանակէն երկու զինուորներ եկան մեզի իմաց տալու որ պատրաստութիւնք պահ մը վերջը իրենց հետ կայարան երթալու: Հազիւ ցնծութեան ժպիտ մը սկսեց էր ուրուագծուիլ ապաստանեալներուն դէմքին վրայ երբ ազգաբար զինուորները աւելցուցին:

— Լոնտոնէն երեք ժամ հեռաւորութեամբ, Հէտլի, Փրկութեան Բանակին ստացուածքը եղող ազարակը պիտի երթաք աշխատելու ատեն մը, մինչ որ նոր տնօրինութիւն մը ըլլայ ձեզի համար...:

Ամենքն ալ յուսալիր կը սխաւէին, ու, գերագոյն հեգնութիւն, խարբերոցի ունեւոր պապուկն էր — միակ անգլիներէն զիտցողը մէջերնին — որ թարգմանի գերը կը կատարէր...: Ան ինչ մեղամաղձոտ, ան ինչ հիւանդ ձայնով մը հազորոցեց մեզի տրուած հրահանգը: Ինք իսկ կ'ընկճուէր, կը հեւար կոր իր բերնէն: Գուրս ելլող խօսքերուն բեռանը տակ:

Ուրախութեան ու յոյսի առաջին շարժումին զայրոյթի ու վհատութեան տրտունջներ յաջորդեցին: Բայց համակերպութիւնը չուշացաւ: Պէտք էր ընտրել վերջապէս անօթութեան ու քաշկրտուող կանքի մը ստուգութեանը միջեւ: Մէկիկ մէկիկ հանդարտեցան ոչ լոնցին ամենքն

ալ, ու պահ մը վերջը, երկու Փրկութեան զինուորներէն առաջնորդուած ճամբայ ինկանք գէպի կայարան:

Ու աչքերս դարձան ակամայ ու անընդհատ ձերուկ խարբերոցիին որ դուխը ծռած, տքտքալով կը հետեւէր իր ընկերներուն, յայտնապէս նեղուած իր քիւկերին սիրելի ծանրութեան:

Անկեղծօրէն մեղքայ զինքը: Այդ մարդը մենէ է՛ն դժբաղդն էր ապահովաբար, այդ պահուն...:

* *

Կէս դիշերին մօտ էր երբ Հէտլի հասանք: Ազարակը կայարանէն երկու ժամուան հեռաւորութեամբ բարձունքի մը վրայ կը տարածուէր, ու ամբողջ տաժանելի զառիվեր մը պէտք էինք քալել հոն հասնելու համար:

Տեղացիներու հետաքրքիր հաւաքումներուն մէջէն անցանք, մանուածապատ փողոցներէ դուրս եկանք ու սկսանք ելլել ճախճախուտ ու խորտուբորդ ճամբան որ ազարակը կը տանէր:

Մտքէս չպիտի ելլայ բնաւ զիշերուան մէջէն աճապարող այդ վերելքը:

Երտուն հոգի կը քալէինք, մինչեւ ծունկերնիս ցեխերուն մէջ, առանց բառ մը ըսելու իրարու, է՛ն ընկճող ու է՛ն բեռնաւոր լուծեանը մէջ, քշուած տարուած անպիտակից, զրեթէ ճակատազրային մղումէ մը, երկար ու ձիգ մարդու մը ետեւէն, որ, ինքն ալ կարծես, մեր ամենուն միացած հեքերէն հրուելով կ'եխթար ու ետին բնաւ չէր դանար:

Երկրի մի ու նենգաւոր երկինք մը, կէս մութ, կէս պայծառ, կը պղծէր համասփիւռ խաւարը, կը լեցնէր զայն տարտամին, գուշակուածին, կասկածելիին բովանդակ խռովմունքովը, մեր նայուածքին բարերար կուրութիւնը կ'արգիլէր գաղտուկին, պահուրտածին, դարանածին անխոտովանելի բայց խորունկ ու իրական երկիւղովը, ու կը բազմապատկէր, կը զօրացնէր, կը զայրացնէր բոլոր յաճող, հպանցող, կ'առչող ու պարուրող ստուերները...:

Անսահման ու ամայի տարածութիւններէ անցանք հեւի հեւ: Մենէ մէկը չխօսեցաւ բնաւ: Ամենքս ալ սակայն իրար փնտոցեցինք, իրարու մօտեցանք, իրարու ապախնեցանք եղբայրօրէն: Ամենքս ալ, այդ ցաւազին լուծութեան մէջ, հաղորդուեցանք, միացանք, յիշեցինք...:

Մեզի առաջնորդող Փրկութեան զինուորը, մութին մէջ այլանդակօրէն աւելի երկնցած կը շտապէր միշտ մեր հեքերէն մղուած, ու ետին բնաւ չէր դանար: Եւ վերելքը կը յաւերժանար խաւարին անձայրածիր զրկին մէջ:

* *

Գետնայարկ, ընդարձակ սրահին մէջ զոր ձեղձունէն կախուած լապտեր մը կը լուսաւորէր, մերկ ու սեւ անկողիններ կ'երկնային քով քովի: Սեմին վրայ տեղոյն, նիւհար մարդ մը փութկոտութեամբ դիմաւորեր էր մեզի, ու

հիմա մեր շուրջը կը դառնար, ամենուն բարի խօսք մը, ընդունող ժպիտ մը կ'ուղղէր, իրաքանչիւրին անկողին մը կը ցուցնէր ու թաղիքէ վերմակ մը կուտար. մէկէն միւսին կը դառնար միշտ խնդումներն միշտ հաճոյակատար: Փրկութեան զինուոր մը չէր կրնար բլլալ ան. անոնց համազգեստը չէր կրեր, եւ յետոյ — համոզիչ պարագայ — շատ համակրելի ու ազգական դէմք մը ունէր ուր ուշիմ, նայող աչքեր կը վառէին:

Սրահին մէջտեղը, երկաթէ խոշոր վառարանին ջուլ նստած կը դիտէի իմ խեղճութեան ընկերներուս իրարանցումը: Ամենքն ալ շարաչար խոնջէնք մը կը մատնէին իրենց կեքած, փչող կոնակներուն կսկծալի կորութեանը վրայ, ու կ'աճապարէին ժամ առաջ անկողին կնայալու:

Օ՛ այդ անկողինները. անոնց տեսքը զիս կը ջլատէր, կ'անշարժացնէր, կը գամէր աթոռին վրայ: Քարի պէս կարծր ու գերեզմանի պէս սեւ, երկաթէ ու կաշիէ անհնարին անկողիններ կին առոնք, ուր քունին մէջ, բարերար ու մայրական ֆունին մէջ, աւելի տաժանագինօրէն պիտի յոգնէի...:

Մէկիկ մէկիկ նետուեցան, երկնցան անոնց վրայ, թեւերնին բարձ ըրին, ու հագուած, թաղիքէ վերմակնեւրուն մէջ փատթուեցան ու աչքերնին գոցեցին անմիջապէս:

Ու նորէն մտիկ ըրի անոնց տաժանքի հեւքը որ հիմա աւելի խորունկ, աւելի երկար, աւելի խոպոտ դուրս կու գար իրենց կուրծքերէն, կը ծաւալանար, կ'ալիկոծէր սրահին բանտարկուած լուծիւնը, խուլ, անպարտու, հաւաքական հառաչանքի մը պէս...:

Անգիտակցաբար ոտքի ելայ ու անոնց մօտեցայ, նայեցայ: Օ՛հ, այդ խեղճ Հայերուն արհաւիրքի տեսիլներով յաճախուած քունը... անոր մէջ խուժող վայրագ երազները... անոնց բոլոր ցոց աչքերը... անոնց վալկահար ու ինկած պլուխներուն մէջ անազորոյն պատկերներու հեռաւոր ու անլախճան տողանցութիւնը...:

* * *

Յանկարծ դուր բացուեցաւ ու սոճոյն, նիհար մարդը ներս մտաւ: Չիս վառարանին ջուլ նստած գտնալուն զարմացած.

— Դեռ չէք պառկեր, յոգնած չէ՞ք...:

Ու ժօտենալով ու երեսս ի վեր շիբ շիտակ նայելով

— Բայց ինչպէ՞ս կըլլայ... Դուք ի՞նչ գործ ունիք այս խեղճ ապաստաններուն հետ... Հա՛յ էք դուք ալ...:

Հասկցայ իր շուարումը: Չէր կրնար կոր ըմբռնել թէ այդ բիրտ, անառչ գէմքով ու գեղջուկի տարագով մարդերուն հայրենակիցը, բաղդակիցը ըլլայի ես ալ...:

Ընդմիջելով զինքը, աթոռ մը երկնցուցի իրեն: Մահմակած նստաւ դիմացս: Ու անյագ ուշադրութեամբ մը մտիկ ըրաւ իմ արտում ու հասարակ պատմութեանս, կարեկցութեան անկեղծ ու միամիտ շարժումներով:

Երբ ամէն բան ըսի իրեն, յուզումէն աչքերը լեցած, ոտքի ելաւ ու ձեռքս սեղմեց երկարօրէն: Յետոյ նստաւ

նորէն, ու իմ մէջս զինքը հասկնալու կորող, իր Յաւին վստահութեանը արժանի էակ մը վերջապէս գտած ըլլալու երանութեան վախկոտ խանդավառումովը իր շատ լեցուած, շատ երկար ատեն լուծ սիրտը բացաւ ինձի եզրայրօրէն:

— Օ՛հ, շատոնց է կը սպասէի կոր մէկուն, որ պար, այս ցուրտ, մշուշոտ լեռան վրայ, իմ լինցած կեանքս իմանալու, իմ ներսիդիս իսկ թաղուած հոգիս մահալերջի ձայնը լսելու...: Հիմա, օրհնեալ ըլլաք դուք... ինձի միակ ու վերջնական մխիթարութիւնը պիտի տուած ըլլաք զիտնալու թէ զիս ճանչցող մը, իմ խորտակուած էութեանս գաղտնիքը ունեցող մը, ինձի թերեւս մտածող մը պիտի ըլլայ...:

Ու խօսեցաւ, խօսեցաւ ան երկար ատեն, իր յուզումին մէջ ալլակերպած կերպարանքով մը ու ներշնչուած շեշտերով: Իր պատմութիւնը պարզ էր, զժնդակ ու մարդկային:

Մորֆինոման մըն էր այդ մարդը: Ու ասիկա ըսաւ ինձի անհնարին դաճութեան հեգնոտ ժպիտով մը որ երկար սարսուռ մը պատցուց վրաս:

Իր կեանքին մեծ մասը Փանսա անցուցած էր, անգործութեան, վայելքի ու հայեցողութեան տարամերձ ու արգաւանդ կեանքով մը: Հօրենական խոշոր ժառանգութիւն մը ներած էր իրեն ասիկա: Ու քսան տարեկանէն ձգած էր Անգլիան ու անգլիացիները զորս տիրականօրէն կ'արհամարհէր:

Ամէն գեղեցկութեան առջեւ թրթռացող, Արուեստին բոլոր սքանչելի գինովութիւններուն ընդունակ ու հրաւիրող խոսնուածք մը, Բարիզը ընտրած էր իրեն կայանք: Հոն առած էր իր հոգիին կրաւորական ու հեշտամուլ կենցաղավարութեան մը գերազանց կրթութիւնը:

Բանաստեղծութեան ծարաւը եղած էր իր կրօնքը ու Պոլտէն՝ իր պաշտած, խնկարկած, երկրպագած կուրքը: Հիւանդապին անյազութեամբ մը ներշնչած, ծծած էր այդ այսահար հանճարին թունաւոր ծաղիկները:

Ու ճամբորդած էր, շերմեռանդօրէն, աւելի ըմբռնելու, աւելի հաղորդուելու համար Չարին անպատում՝ քերթողին: Գացած էր Արեւելքի արեւակէզ երկինքներուն տակ պատցնել իր սիրալի ծուլութիւնը ու խելայեղ երազանքը: Թուլս ու անթափանց մորթերու տակ, սեւ ու կանաչ աչքերու ետին փնտաւած էր անձանթօթ ու խելացնորող իգականութիւններու խորունկ ու վրդավող գաղանիքը: Ու այդ բոլոր հրավառ պայծառութիւններէն պարձած, այդ բոլոր այրող համբոյրներէն ու սպառող հպումներէն խուսափած, Բարիզ մտած էր նորէն, իր հետ, իր միսին մէջ բերելով մորֆինին ախտաւոր, անդիմադրելի ու չկշտացող ըրձանքը:

Քայքայումը չէր ուշացած: Կին մը, այն շարաշուք, ճակատագրական էակներէն մէկը, որոնք այնքան յաճախ կը պատահին Բարիզի քառուղիներուն գարձքին վրայ, կը ցնցին, կը կարանն ծունկերը, կանգ առնել կը սպտպեն քեզ, եւ որոնց ետեւէն խենդեցած նայուածքը անկարելի

երջանկութիւններուն յուսահատ երգը կուլայ վայրկեան մը, հրաշալի ու զիւային կին մը իր դէմը ցցուած էր օր մը, ու զայն իր շրջազգեստին բուրումին մէջ բանտած, իր քայլերուն կապած, քաշած տարած էր իր ետեւէն, կործանումի անդառնալի ճամբուն մէջ:

Ու կինը միանալով Մորֆինին լմնցուցած էր զինքը...

Իր ամբողջ ունեցածը տալէ, տալէ, տալէ վերջը, երբ ալ բան մը չէր մնացեր իրեն, ճամբու զրբեր էին զինքը ու զուրբ երեսին գոցեր էին...

Անկից անդին ալ չէր գիտեր: Կը յիշէր միայն որ ազգականներու զիմեր էր, ողբալի վիճակի մը մէջ, ու անոնք կանակ դարձուցեր էին իրեն:

Գիշեր մը, Փրկութեան զինուորներ, Լոսանոնի մէկ դէմքակ փողոցին մէջ, ցետի ու ազտեղութիւններու վրայ փռուած, զրեթէ կիսամեռ գտեր էին զինքը ու վերցուցեր, ապաստանարան մը տարեր: Հոն ատեն մը դարձանուելէ վերջը, Հէտլիի ազարակը զրկուեր էր, ուր անկից ի վեր կը մնար:

Ու արտում շեշտով մը աւելցուց.

— Փափաք չունիմ ասկից հեռանալու: Քաղաքներու բուն կեանքը ալ ինծի համար չէ: Անկարող եմ յամառ ճիգերու ու պայքարի չեմ կրնար: Ամէն օր, Անգլիոյ չորս ծայրերէն խեղճեր, անժառանգներ, ինկածներ կը հասնին հաս. ատեն մը կը մնան, պատառ մը հացի փոխարէն աշխատելով, ու կ'ելլան կ'երթան: Անոնցմով զբաղիլ, զանոնք խնամել ձեռքէս եկածին չափ, ասիկա մխիթարանք մըն է ինծի: Չեմ հայրենակիցներէն շատեր եկան, գացին ասկից. կրցածս բրի այդ անիրաււաններուն անցքը ուրախացնելու համար: Դուք ալ վաղը կ'երթաք հարկաւ: Կը մողթեմ որ կեանքը աւելի ներող, աւելի ժպտուն ըլլայ ձեզի...

Ու լսեց: Քիչ մը ետքը, կարծես վերուշումէ մը թելադրուած՝

— Հիմա ալ մորֆինը ձեզ եմ շատոնց: Երբեմն չար մարմաջ մը կ'արթննայ միտիս մէջ, մարմինս կը գալարէ, բայց այն ատեն զուրս կը նետուիմ, բաց օդին կը վազեմ դաշտերուն մէջէն, կը յոգնիմ, կը քրտնիմ ու կը մոռնամ...

— Բայց այս մարդիկը, ըսի, խօսքը փոխելով, ինչպէս կ'ապրիք այդ Փրկութեան զինուորներուն հետ...

— Օ՛, անոնք անասնական ու գէշ, խափանուած հոգիներ են... անոնցմով չեմ զբաղիր: Արդէն զիս հանգիստ կը ձգեն: Իրենցմէ բան մը չեմ ակնկալեր ու իրենց վնաս մը չունիմ: Ինծի պաշտօն տուած են հսկելու ապաստաններուն վրայ, ու գիտեն որ սիրով կը կատարեմ պարտականութիւնս: Իսկ իրենք... մի՛ խաբուիք իրենց երկնային ձեւերէն. շահախնդիր ու ետական մարդիկ են ամենքն ալ, ու պիտի տեսնաք որ Փրկութեան Բանակը, իր միտքիքական ու մարդասիրական կեղծ դիմակին տակ, հսկայ ու անպատկառ շահագործումն է մարդկային թշուառութեան...

Ու համակերպութեան սրտածմբիկ ու անհուն նայուածք մը կեցնելով վրաս՝

— Այս ցուրտ ու մշուշոտ լեռնէն անդին... օ՛հ, չէ՛, ալ բան մը չեմ յուսար... Հոգիս շատոնց թաղուած է ներսիդիս... պիտի երթամ այսպէս, մինչեւ որ մարմիրս ալ թաղուի...

Ու ցած, խորունկ, ողբական ձայնով մը, տարօրինակ ժպիտ մը իր մահատիւ գէմքին վրայ՝ Պոպէնի խեղճերուն Մանը աստուածային քերթուածը ըսաւ ինծի:

Մանն է, առա՛յ, որ կը մխիթարէ ոչ կ'ապրեցնէ, կեանքին նպատակն է առ, միակ յոյսն է առ...

Բայց մէկէն սաքի ելաւ:

— Ետտ ուշ ըլլալու է, ըսաւ, չէ՛ք ուզեր պատկիլ...

Մեր շուրջը Հայ ապաստանեալները բունին անգունդներուն մէջ մխրճուած էին: Անոնց հեքը աւելի սաստկացած էր հիմա ու սրահին մթնալորտը կը լեցնէր ճնշող, խեղդող ծանրութիւններով:

Ըսի իրեն այդ անկողիններուն ինծի ազգած վախը:

— Կ'երեւայ կոր որ դեռ շատ քիչ տառապեր էք, ըսաւ, բարի ժպիտով մը, ու զուրս ելաւ:

Պահ մը վերջը, թաղիքէ վերձայններու ծրար մը շալկած եկաւ: Անոնցմէ քանի մը հատ անկողինի մը վրայ փռեց, հատ մը ծալեց բարձ ըրաւ ու ուրիշ երկու հատ ալ ծածկուելու համար ձգեց:

— Ասով պէտք է գոհ ըլլաք, իմ երիտասարդ բարեկամս, ըսաւ, աւելին ձեռքէս չի գար: Հոյ չէ՛, ատենք կ'անցնին: Պ սկիեցէք դուք, բունը չպիտի ուշանայ: Վաղը նորէն կը տեսնուինք: Գիշեր բարի...

Ու ելաւ դնաց, զիս միտքիս մինակ ձգելով բոլոր այդ ճաղ-անկողիններուն մէջտեղ, ուր կենդանի-զիակներ կը քնանային...

Անկողին նետուեցայ ու զուրս վերձային տակ ծածկեցի:

Ետքաթ մը մնացի այդ տեղ: Չիս չաշխատցուցին: Մորֆինումանը բարեխօսեր էր ինծի համար Փրկութեան զօրապետներուն:

Այդ արտում օրերը իրեն հետ, իրեն քով անցուցի ամբողջ: Առտուն կանուխ կ'ելլայինք ու կ'ընկերանայինք Հայ ապաստանեալներուն մինչև իրենց հերկելու հողերը: Հոն երկարօրէն կը խօսէինք ու կը ծիւղէինք, զիտելով անոնց աշխատանքը, ընդմիջելով զիրենք, սրտապնդող խօսքեր ընելով իրենց: Յետոյ կը հեռանայինք ու անվերջ մշակուած տարածութիւններու վրայ կը քալէինք, կը քալէինք ժամերով, մեր ձայներէն տարուած:

Ճաշի ժամերուն վազնիվազ կը հասնէինք ամենուն ետեւէն: Ու այդ միջոցին միայն կը տեսնայի Փրկութեան ազարակը ինկած քուրթ թշուառները:

Ճաշարանը ահագին ու այլանդակ շէնք մըն էր, ա. գարակին կեցրոնը, բարձր գեանի մը վրայ կառուցուած, ու կը բաղկանար զրեթէ մի միայն քառակուսի անոսհման սրահէ մը: Հոն, փայտէ մաշած նստարաններու դիմաց —սրնք հազարաւոր անօթիներու սերունդներ կրած էին— մերկ ու աղտոտ սեղաններ կը շարուէին, ծածկելով ամբողջ տարածութիւնը՝ խեղճութեան յաւիտենական քայլերուն տակ ծերացած տախտակամածին: Կիրով ծեփուած բարձր պատերուն վրայ, խոշոր տառերով բարեպաշտ արձանագրութիւններ իրենց անագորոյն հեգնութիւնը կը լըռէին, թշուառութեան կտրաքամակ ուխտաւորներուն տույն ներկայութեանը դիմաց:

Մուտքին ճիշդ քօլը, կտրուած ու իւզտուած հացի շերտերու, թէյի սեցած ամաններու ու ամերկեան պահածոյ միսի վիթխարի կոյտի մը ետեւ, ստոթուած մարդ մը իւրաքանչիւրին բաժինը կ'երկնցնէր մեքենաբար: Ու կարգաւ, իրարու ետեւ կուզային բոլոր ապաստանեալները, կը մօտենային, կանգ կ'առնէին այդ սեղ, երկու ձեռքերնին կը կարկառէին, ուտելիքնին կ'առնէին ու նըստարաններուն վրայ կ'երթային քօլ քօլի ծոխ, էյնալ անհամբեր, այդ աւրուած, գարշազայն միսի կտորներուն, այդ պժգալի թէյի ամաններուն, այդ սղմահամ հացի պատաններուն վրայ:

Օ՛ այդ ճաշարանին զարհուրանքը: Ոճրագործի ու սուրբի երեսներ էին, շիլ, դածան, միստիքական նայուածքներով... Օ՛ մանաւանդ սա բոլոր բերանները որ կը լափլիզէին, կուտ կուտ կը խմէին, կը թքնէին, կը քֆրէին, կը բացուէին ու կը դոցուէին անգագար, այդ զգուանքի անկարող, այդ անասնական, այդ գերմարդկային բերանները ու անոնց արտաբերած խոպոտ վանկերուն հաւաքական խուլ ու աղտոտ խժլուրը...:

* * *

Ու դիտելի հիմա որ ամբողջ ապիկար, անկարող ցաւապար մարդկութիւն մը — ֆրկութեան Բանակը — կ'ապրէր հանգիստ, ազօթելով, օրհնեղելով, անորակելի սնունդի մը փոխարէն միայն՝ ասոնց պէս հազարաւոր դժբաղդներ չարաչար աշխատցնելով՝ ապաստանարան յանկուցիչ անունին տակ կազմակերպուած դործարաններու ու ագարակներու մէջ:

Ինչ երկինքէն ինկած պարզեւ, չէ՛ մի, այս թշուառութեան յաժառ շահագործողներուն համար, հայկական նահատակութիւնն ալ: Ահ, քստմեղի կատակերգութիւնը: Մեր աղէտներուն արիւնոտ արձագանգները այդ ամբանացած ուղեգններուն աղջամուղջին մէջ յանկարծ վարդազոյն հորիզոններ բացին: Ու դիւահարի պէս նետուեցան վազեցին անոնք Եւրոպայի նաւահանգիստները, սպառնլու շարդերէն փախտական Հայերուն: Գրկարաց դիմաւորեցին զանոնք, ու սկսան բարձրացնել ամէն կողմէ իրենց կեղծաւոր ձայները:

— Ալէլուեա՛, ալէլուեա՛...
Ու ոռնացին, ոռնացին ամիսներով: Շատոնց է ասանկ առիթ մը չէր պատահեր: Ահ, ինչ գրամագլուխ, ինչ անսպառ ոսկիի հանք սա լեռնացած Հայ Տառապանքը...:

— Ալէլուեա՛, ալէլուեա՛...
Ու բոլոր անհնարին տգեղութիւնը իրենց արդահատանքի ծամածուծիւններուն, իրենց դթութեան պիղծ խօսքերուն, իրենց քրիստոնէական անմեղունակութեան սուտ շարժումներուն:

— Ալէլուեա՛, ալէլուեա՛...
Հսկայական աէքլամ մը եղաւ իրենց մեր խեղճութիւնը, ու Անգլիոյ չորս ծայրերէն դրամը հոսեցաւ, դիւռուեցաւ ֆրկութեան սնտուկներուն մէջ:

— Ալէլուեա՛, ալէլուեա՛...
Պոռնկութեան անարգ փողոցներու մէջ, իրենց փողերու եւ թմբուկներու խեղկատակ երաժշտութիւնովը առաջնորդած, մեր Սուզը պտտցուցին: Ժողովարահներու վերայ ցոյցի դրին մեր ցաւազին զաւկները ապուշ ու ցած խուժաններու: Ու հոն, երկարօրէն, շնականօրէն մեղքեցան, հառաչեցին, մտաեցին մեղի...:

— Ալէլուեա՛, ալէլուեա՛...
Ու ժողովարահներու դոններուն երկու կողմը, խնամոտաբար զետեղուած դանձանակները լեցուեցան, լեցուեցան Հայ անունը նախատող ողորմութիւններով:

— Ալէլուեա՛, ալէլուեա՛...
Ու իրենց Չիքալօի հոսած միսը, իրենց լուացքիչաւր—թէյը կերցուցին, խմցուցին անոնք ամիսներով մեր շուարած սղաքներուն...:

* * *

Մեկնած առտուս, երբ միսը—բարովս ըօի ու բաժնուեցայ հայրենակիցներէս, Մորֆինմանը թեւ մաս ու ընկերացաւ ինծի մինչեւ ագարակէն ժամ մը հեռու:

Կայարան տանող այդ ճամբուն վրայ տարտամ ու անմոռանալի խօսքեջ ըրաւ ինծի, ձեռքի լայն ու հանդիսաւոր շարժումներով ու անպատում ունեւումի նայուածքներով:

Մեր մէջը, այդ քանի մը օրերուն, տարօրինակ մըտերմութիւն մը հաստատուեւր էր որ կը վերջանար Դիւռուածին այդ ամայի զառիվարին վրայ: Հոն կանչ առաւ անիկա, ձեռքս երկարօրէն սեղմեց ու ըսաւ.

— Երթաք բարով, շնորհակալ եմ ու չպիտի մոռնամ ձեզի... Դուք ալ մի մոռնաք լերան Յուսահատը...:

Ու լռեց: Յուզումս թող չտուաւ որ միթարական խօսք մը ընէի իրեն: Ինչ պիտի կրնայի ըսել արդէս: Օ՛, բառերուն վիթխարի անիմաստութիւնը խոշոր ու անդարման կոկիծներուն առջեւ:

Ատեն մը լուս մնացինք այդպէս դեմ դիմաց: Ան չէր երերար տեղէն ու ինծի կը նայլը շեշտակի ու ես կը վախնայի վեր ատենը իր նայուածքին ուժգնութիւնէն հալածուած աչքերս:

—Օ՛ն, բարեկամս, քաղցե՛ք, ես ձեր ետեւն պիտի նայիմ՝ քիչ մը ատեն, երթաք բարով, մի մտնաք լերան կամուր Աքսորեալը...

Ճիգ մը ըրի ու իրեն նայեցայ: Անոր գեղնած բիւրուան վրայ արցունքի երկու կաթիլ էլնալու մօտ կը գուշային...

—Մնաք բարով, ըսի, զրեթէ պոռալով, և սկսայ աճապարել:

Ու վազեցի, փախայ ատկից, հեռանալու, մոռնալու պատպակէն այրած: Ու այդ անձկութեան վազքիս մէջ թըւեցաւ ինձի որ կը զլորէի, կ'իյնայի կեանքին իսկ զոտի վարէն, ուրկից ան կըլեր, ազատագրուելու էր վերջնապէս...

Անիկա կը մնար հոն հիմա, Մահուան սպասելու պայծառօրէն, ու ես կը վազէի, կ'իջնայի գէպի կեանքը, ամբողջ երիտասարդ խանգովս հասնելու, բռնելու, տիրանալու...

Անիկա մարդն էր որ ա՛լ չի յուսար...

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՋԵՐ

ՀՐՈՍԱԿԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՆ

ԺԲ

Վերսդարձ Արևոտանկերը. — Անակեկալ հանդիպում. — Եկեղեցաց գաւառի ժողովը. — Ծրագրի գործադրութեան ձեռնարկ. — Աղետաւոր վախճան:

Երբ մութը կ'սխեց նորէն ճամբայ ինկան եւ կէս զիշերին հասան ծանօթ տուն մը: Հոն շատ զէշ լուրեր իմացան: Պոլիս բռնուած եւ Արմուտան բերուած ընկերներն երկուքը ամէն բան խոտոտուանաւ, ամէն գաղտնիք երեւան հանած էին. իսկ երկու ընկեր ամուր-բերան մը նալով, շղթայի զարնուած եւ ամէն հազորդակցութենէ հարուած էին: Հրոսակները շատ ցաւեցան ու զայրացան իրենց նախկին ընկերներուն սկիզբութեան մասին. ծրագրերներն ամենքն ալ շուրջ կ'իյնային: Նոր խորհուրդ մը յաջացան. որոշեցին Միւսիք հաճի Գեորգը մէջ մը մէջ տեղէն վերցնել. ամէն շարիքի պատճառը ան էր: Այս խորհուրդին իրագործելու համար պէտք էր Արմուտան երթային. ուստի մեկնելով իրենց օթեւանած տունէն ուղղակի Արմուտան գացին, եւ իջան հրոսակեային տունը: Հոն հրաւիրեցին Արմուտանները զանուած ընկերները ուրոնք գեռ արի մնացած էին. խորհուրդին անոնց պարգեցին: Ժողովը որոշեց որ այդ սպանութեան գործը պէտք չէր որ հրոսակները իրենք ընէին, վասն զի եթէ կառավարութիւնը տեղեկանար անոնց ներկայութեանը Արմուտան, ժողովուրդը կրկին մեծ առապանքներու պիտի ենթարկուէր. այս նկատմամբ երկու երիտասարդ ընկեր յանձն առին այդ գործը իրենք կատարել:

Երբ նկատուով երկու երիտասարդ ընկեր յանձն առին այդ գործը իրենք կատարել:

Այս երկու երիտասարդները օրերով լրտեսեցին հաճի Գեորգը բայց չյաջողեցան բան մը ընելու, վասն զի մինակ զուրս չէր ելլեր ու միշտ հետը զինեալ մարդեր կ'առնէր կառավարութեան պաշտօնատեղին երթալու առան: Բայց օր մը երբ իր տունէն քիչ մը հեռու արտի մը քով պտոյտ կ'ընէր ընկերով մը հետ, ահա երիտասարդները կը հասնին եւ ընկերները կը պարպեն. մարդը կը զլտորի կ'իյնայ, ու սպանիչները կը հեռանան: Ամէն կողմէն հայ ու թիւրք զեղացիներ թափեցան. բայց գնտակները պարապը գացած էին. հաճի Գեորգին մատին մէկը վիրաւորուած էր. գնտակները մուշտակը ծակեր անցեր էին. վիրաւորեալը վախէն ինկած է եղեր:

Ա՛լ միւտիրը կատարած շան պէս սկսաւ շորս կողմը խաճնել. ամէն վատութիւն կը նիւթէր: Լուր արուեցաւ կառավարութեան, եկան տեղեկագրեցին: Գործը շատ մեծ ցոյց արուեցաւ որպէս զի կրկին զօրք բերել տրուի: Կառավարութիւնը սակայն չուզեց ծախս բնել եւ զօրք խրկել:

Հաճի Գեորգին գէտ ընկերներ պարպոզները երկու երիտասարդներ էին, ու երբորդ մըն ալ իրենց աջակիցը եղած էր. այս երեքն ալ միացան Պէլլերեանի խումբին, որ հիմա ա՛լ վեց հոգիէ կը բաղկանար: Հրոսակները այլ եւս չուզեցին գեղ մնալ. նորէն ելան լեռները: Հոն կին մըն էր միայն իրենց օգնականը: Այս քաջսիրտ կինը ճարպիկութեամբ ամէն օր ուտելիք կը տանէր փախտականներուն, եւ միանգամայն կը հաղորդէր գեղին մէջ անցած զարձանները: Օր մըն ալ լուր բերաւ թէ «Ղըր-Սէրտար»ը պիտի գայ այդ կողմերը աչքելու համար, ուստի հրոսակներուն անտեղուանքէն հեռանալը անհրաժեշտ էր: Խումբը հեռացաւ, սակայն ո՛վ այլ եւս իրենց ուտեստը պիտի բերէր: Բայց նորեկ հրոսակներէն մէկը վարպետութիւն մը ըրաւ, որով կարող եղան շրջակայ թիւրք գեղերէն իսկ ուտելիք ճարել: Թրքական ոստիկանի մը զգեստը եւ սուրը ձեռք ձգեցին. նորեկ հրոսակը ատենցմով զարդարուած թիւրք գեղերը կը պտըտէր եւ իբր կառավարական ոստիկան ուզածները կ'առնէր կը բերէր. երկու ընկեր հեռուն կը սպասէին պաշարը կրելու համար:

Օր մը այս սպասող ընկերները հանդիպեցան քիւրա հովիւի մը որ ոչխարները կ'արծէր. այս խեղճը զինուած մարդիկ տեսնելով լեղապատտ կ'ուզէր փախչիլ. բայց հրոսակները թող շտուկն որ մեկնի: Հովիւը զողալով զողզալով մօտերնին եկաւ: «Ինչ ձեզի փեսա չի գար, կ'ըսէր, հոգ մի՛ ընէք. ես թիւրք չեմ, զըզըլպաշ եմ:» Սիկառ տուին պատուեցին. հաց ալ հրամցուցին. և հարցուցին թէ իրենց վրայօք ի՞նչ կը խօսուէր:

—Շատ բաներ կը պատմեն, ո՛ր մէկը ըսեմ, պատասխանեց զըզըլպաշը: Ա՛լ յոյսերնին կտրած են ձեզի բռններէ. եւ չեն ալ կրնար բռնել, վախկո՛տ շունները: Հիմա հոս բլլալից կ'ընէ լսեն, կ'երթան ուրիշ տեղ կը պաշարեն: Քիւրա զըզըլպաշին խօսուածքը լաւ էր. բայց մէկանց

չէին կրնար հաւատալ, ուստի սրտչեցին փորձել: Իրենց սստիկան ծպտուած ընկերը անզին սերիշ տեղ մը կը քնանար. դացին գործը անոր հասկցուցին, հրահանգ տուին ուրիշ կողմէ մը վաչ իջնել և հովիտին անցնելիք ճամբուն վրայ սպասել. երբ հասնէր, պէտք էր բռնութիւն գործ գնէր թէ՛ «Ղաչախները ս'ըր են, տեղերնին ըսէ, չէ նէ քեզի կը սպաննեն, բանտ կը տանիմ» ու նաեւ ծեծելու էր: Եթէ հովիւը մատնէր ան ատեն ծպտեալ սստիկանը ա'լ թող պիտի չի տար անոր օձիքը:

Այս կարգադրութիւնը ընելէ յետոյ թող տուին որ քիւրտը մեկնի, երգում աճնելով որ մէկուն բան մը պիտի չըսէ: Ղըզըլպաշը մեկնեցաւ ու ահա ծպտեալ հայը դէմը ելաւ ուրիշ կողմէ մը. սպառնալիքը ըրաւ, ծեծ քաշեց մարդուն, բայց անիկա բերանը չըացաւ, ու կեղծ-ստիկանն ալ մարդուն օձիքը ձգեց: Ետքէն ալ այս քիւրտէն երբեք ձայն մը չելաւ: Պատուելին հետեւեալ գիտողութիւնը կը գրէ ցաւած սրտով. «Երբեք ձայն մը չելաւ այդ քիւրտէն, մինչդեռ եթէ հայ ըլլար ըսելուն կատկած կար: Ղըզըլպաշնոր իրենց երգումը կը յարդն ընդհանրապէս ու մեռնին իսկ չեն բտեր: Իսկ մեր երգուեալ ընկերները մի քիչ բռնութեան տակ, ըսելէն անզին բան մըն ալ ըրին, որուն մասնիչ անունը կը տրուի:»

* * *

Օր մը Պէյլրեան իրիկուան դէմ խմբովին Ս. Գեղրի Սարը կը գտնուէր, եւ ահա տեսան որ հեռուէն, Սեւ Սարի հանապարհով երկու հոգի քիւրտի տարազով կը յառաջանային. հսկողները շատ հեռուէն դիտած ըլլալով ձայնեցին ընկերներուն. բոլորին ուշադրութիւնը հոն դարձաւ: Հետզհետէ կը մօտենային. այդ ատեն աս քիւրտերը ս'ըրկէ դալու էին, ս'ըր գնալու էին ըսելով իրենց մէջ խորհրդածութիւններ կ'ընէին: Պատուելին հեռագիտակը ձեռքը կ'ըսէր «Մէկը՝ Ճինկոյին կը նմանի. միւսը՝ անձանթ մըն է:» Ընկերները չէին հաւատար և բոլորն ալ հետադիտակով նայիլ կ'ուզէին. որը կ'ըսէր ճիշդ Ճինկոն է, որը կ'ըսէր ոչ: Բաւական մօտեցած էին եւ աճապարանքով կ'ընթանային ուղիղ ճանապարհէն որ շտակ Արմուտան կը տանէր: Խաբապետը երկու հոգի ասոնց առջեւ իրկեց, իմանալու համար թէ ս'ի են. իսկ անոնք ըրնաւ բանէ մը տեղեկութիւն չունենալով, երբ տեսան երկու մարդու իրենց կողմը գալը, քարերու տակ մտան ասոնց դանդաղելու որպէս զի իրենց չմօտեցնեն, ու կը պոսային սարէն իջնողներուն «ատըմ աթմայըն»: Այս բանը տեսնելով ընդառաջ գացողները իրենց ալ մարտկոցներու ետեւէն ինքզինքնին պաշտպանելու պատրաստուեցան: Երբ այս կուտի պատրաստութիւնները տեսան սարին գաղթը եղող ընկերները, սկսան սուշել խորհրդաւոր սուլիչը, ու քիւրտերէն մէկը կամաց կամաց զուրը կը բարձրացնէր իմանալով խորհրդաւոր սուլիչին ձայնը. ընկերը կը պոսար «ի՛նչ կ'ընես, գլուխդ ցոյց մի՛ տար թշնամիներուն»: Բայց միւսը սուլիչէն հասկցած էր թէ ով էին

գիմացիները. «Մի՛ վախնար, պատասխանեց. թշնամիներ չեն, մեր փնտաւածներն են» ու բարձրաձայն գոչեց.

— Այժմեան է:
— Արծին է, պատասխանուեցաւ:

Կարգախօսը փոխանակուելով, ա'լ երկուստեք մարտկոցներէն հլլելով ողջագուրեցին իրար:

Մէկը Ճինկոն էր, որ իր արկածէն ետքը Տէրօմ ապաստանած էր. միւսը հոչակաւոր յեղափոխական մը առնոր հետ մէկտեղ, կուգար Պէյլրեանի միանալու: Այս միացումով հրոսախումբը հիմա ութ հոգիէ կը բաղկանար. կարեւոր գործեր անսնելու ժամանակն էր: Ամենքը 93 մայիսին ճամբայ ինկան մօտակայ քաղաք մը երթալով կազմակերպութիւն մը պատրաստելու: Շատ դժուարութիւններ կրեցին նոյն իսկ հայ գեղերէ անցած ատեննին: Բայց մեծ դժբաղդութիւնը պատահեցաւ քիւրտերու հանդիպումէ մը որ հետեւեալ պարագաներու մէջ տեղի ունեցաւ:

Գիշեր մը երբ ձորերէ կ'անցնէին հեռուէն ուրիշ ձորի մը մէջ լոյսեր նշմարեցին: Առաջնորդին բացատրեց թէ քիւրտերը ոչխարներով ամարանոց ելած են, ձորին մէջ ճամբուն վրայ անուշ ջուրերու մօտ. հոն պանիր, կարագ, մածուն կը պատրաստէին: Ասոնց չերեւնալու համար պէտք էր շատ հեռուէն, երկար ճամբաներէ անցնիլ: Ընկերներէն մէկ երկուքը հաւանեցան այս կարգադրութեան. սակայն Ճինկո եւ ընկերը ուզեցին որ իրենց քիւրտերուն մօտ երթան՝ ուտելիք տանել բերելու. իրենց քիւրտի տարազ հաւած ըլլալով եւ քրդելու ալ գիտնալով վտանգ չկար թէ հայ ըլլանին կը կատկածուի: Ասոնք երկուքը մեկնեցան, եւ միւսները հեռուները մնացին սպասողական դիրքի մէջ:

Երբ Ճինկո եւ ընկերը մօտեցան քրդական վրաններու շունները հաջելով սկսան յարձակիլ. արու քիւրտերը հրացան տոած քարերու տակ մտան, կիները ու երախաները կարկուտի պէս քար կը տեղաշարժեն: Արմուտ, բարձր ձայնը դիշերուն խոր լուծեան մէջ քարերէ արձագանգ տալով օդը կը բարձրանային: Ի զուր երկու հրոսակները քրդերէն կը պոսային թէ իրենց գողեր չեն այլ ճամբորդներ որ անցնիլ կ'ուզէին միայն. բայց քիւրտը վտահալութիւն չունէր: Հեռուն մնացող ընկերները տեսնելով որ անզին կացութիւնը կը ծանրանայ, իրենցմէ երկուքը օդնութեան խրկեցին: Ասոնք թիւրքերէն հրամայեցին քիւրտերուն հանդարտ մնալ եթէ չէին ուզեր կրակի բռնուիլ. եւ իբր վաւերացում սպառնալիքին, մարթինի մըն ալ պարպեցին: Կացութիւնը անմիջապէս փոխուեցաւ հրացանին պայթիւնին. կիները ու երախաները լալով կ'ազերակին, եւ իրենց մարդերուն հասկցուցին թէ եկողները փաս պատճառելու դիտում չունէին: Ինչ եւ է, կարագ, մածուն, թան աճնելով մեկնեցան: Բայց այս միջոցին լեռներու վրայ գտնուող քիւրտերէն երկուքը միայն վար իջած էին, միւսները մեկնեցին էին, որպէս զի իմաց տան ամէն կողմ: Ու արդարեւ յաջորդ օրը փնտաւողներ տեղի ունեցան, եւ հրոսակները հագիւ թէ կարող եղան պահուրտելով ազատիլ իրիկուան դէմ առաջադրեալ քաղաքը հասան:

Հոն հաւաքուած ընկերները խորհրդակցութիւններ կատարեցին, որոշումներ տուին. սակայն Պէյլէրեան հրոսակուծը պատրաստուած էր մայիսի մէջ որոշեալ օր մը Եկեղեցաց գաւառը գտնուիլ, նախապէս տրուած որոշումի մը համաձայն. ուստի Պատուելին հոն ձգելով խումբերու կազմակերպութեան համար, իրենք միւսները մեկնեցան: Պատուելին ու Պէյլէրեան պինդ մը իրար սեղմեցին աչքերնին արցունքով լեցած: «Եւ ո՞վ կրնար մտքէն իսկ անցընել, կը գրէ Պատուելին, որ այդ վերջինը պիտի ըլլար»: Խեղճը Եզդիպտոս այս սողերը գրած ատեն ինքն ալ չէր կրնար մտաբերել թէ արդարեւ այլ եւս ուրիշ գրկախառնում անհնարին պիտի ըլլար, քանի մը օրէն ինք գերեզման դրուելով:

*
* * *

Պէյլէրեան խումբը առած դիշեր եւ ցորեկը մէկ ընելով կը յառաջանար, որպէս զի որոշեալ օրը ժամադրաւորը գտնուի: Ինքզինքը աւելի ուժեղ կը զգար, ձմեռէն ի վեր կացութիւնը շատ փոխուած ըլլալով: Իրենք հիմա ութ էին, զօրեղ խումբ մը պատրաստած էր Եկեղեցաց գաւառը, կանոնաւոր կազմակերպութիւններ գոյութիւն ունէին Արմուտաններու շրջակայ քաղաքները: Ընդարձակ ծրագիր մը գործադրելու հնարաւորութիւնը կար:

Երբ ժօտեցան Եկեղեցաց կեդրոնաւայրը, իրենցմէ մէկը առաջ անցաւ տեղեկանալու թէ ընկերները հաւաքուած են թէ ոչ: Ետ դարձաւ լուր բերելով թէ ամենքն ալ հոն են, եւ անհամբեր իրենց կը սպասեն: Աթենքի կեդրոնէն ալ ներկայացուցիչ մը եկած է եղեր: Եկեղեցաց ընկերները խմբովին ընդ առաջ եկան Պէյլէրեանի: Երկու խումբերուն իրարու հանդիպումը խանդավառութեան, ոգեւորութեան, ցնծութեան աննկարագրելի տեսարան մը եղաւ: Թուէր այն թէ հայկական անդրանիկ բանակներու հանդիպումն էր պատերազմի գաշտին վրայ, յաղթանակէ յետոյ:

Երկու խումբերը գացին կեդրոնաւայրը ուր իրենց կը սպասէին ընկերներ ու ընկերուհիներ:

Յնձուութիւնը կը տիրէր. ամենքն ալ ոգեւորուած էին: Չորս օր շարունակ գումարումներ ունեցան, ու վերջնական որոշումներ ընելով ծրագրեցին այդ տարին գործադրուելիք յատակագիծը: Սրբազան գերեզմանի մը վրայ վերջնական ուխտերնին ընելով, ա՛լ բաժնուեցան, իւրաքանչիւր խումբը իր պարտականութիւնը կատարելու համար:

*
* * *

Երբ Պէյլէրեան իր խումբովը Բագաոփձ կը գտնուէր, իր ներկայութիւնը կ'իմացուի. կառավարութիւնը անմիջապէս զօրք բերել տալով կը վերուկսի հալածանքը: Երեք օր, զիշեր եւ ցորեկ հալածուած, անօթութենէ նուաղած, ոտքերնին ուռած, զիշեր մը հագիւ հագ կարող կ'ըլլան Արմուտան ժամանել: Մէկ երկու ժամ զգայազուրկ կ'իյնան: Այս միջոցին Պէյլէրեանի մայրը կ'աղաչէ զաւելին

ելլել վարի Արմուտանը երթալ, վասն զի վերի Արմուտան կացութիւնը վտանգաւոր էր: Քուրիչայի ստիկանները լեցուեր էին սրիշ շատերու ընկերակցութեամբ: Բայց հալածեալներուն վրայ կարողութիւն չկար սաքի վրայ կայնելու: Վերջապէս կը հաւանին մտիկ ընել եղած առաջարկներուն ու երբ կը մեկնին արդէն ա՛լ լուսցած էր. մէկ երկու հեծեալ ստիկաններ զիւղէն ելլելիք ճանապարհներու անկիւնները կը լրտեսէին, մեկնողները տեսած, ու հեռուէն կամաց կամաց հետեւած, լուր տալով նաեւ Մեծ-Արմուտան պատրաստ գտնուող ստիկաններուն: Պէյլէրեանի խումբէն մէկը միայն կարող եղաւ ետ մնալով, հրացան պարպել ստիկաններուն որպէս զի չմտենան: Երիտասարդը մէյ մը կը վազէր ընկերներուն, անոնք առաջ կը մղէր, մէյ մը ետ կը դառնար ստիկանները հեռու պահելու: Փախստականները, ուժասպառ, քալափոխ մը ընելու անկարող, կ'ընէին չէին ըներ կը յառաջանային ապաստանարան մը գտնելու: Այսպէս ժամ մը քալեցին այգիներէն դուրս ելան եւ մօտեցան ինի մազարային, ուսկից անդին պիտի անցնէին: Ու տեսան որ մեծ բազմութիւն մը ճամբանին կտրած էր. ա՛լ ոտիպուեցան մտնել քարայրը որ այգիներէն ու ժօռն վազող գետակէն բիշ բարձր քարերու մէջ կ'իյնար: Ընկերը որ հրացան կը պարպէր, կարող էր զեռ քայլել, ուստի միւսներուն խորհուրդովը ինք քարայրը չմտաւ, այլ հեռացաւ գնաց, որպէս զի սրիշ խումբի մը իմաց տայ պատահած դժբաղդութիւնը:

Մինչ ան կը հեռանար, պաշարողներն ալ եկած հասած էին միւսները ամենքն ալ քարայրին մէջ նոր մտած էին, ու նոր ընկեր մը, զրեթէ պատանի մը, խորէն, ինքն ալ երբ պիտի մտնէր ահա գնտակ մը պալով ոտքը կը վերաւորէ. տղան գետին պակելով հրացանը թշնամինը ընդ կողմը կ'ուղղէ եւ երեք հոգի կը վերաւորէ: Քարայրէն այս տեսնելով կը սկսին վերէն հրացան պարպել. բայց քարայրին դրան առջեւ պատնէշ չկար, և ներսիները չէին կրնար առանց երեւնալու կրակ ընել. ու թշնամին չէր երեւնար իրենց: Ճինկօ երբ կրակ կ'ընէր, ուսէն մեծ վերք մը ստացաւ: Պաշարողները իրենց կապարները կ'արձակէին արդէն ծանրապէս վիրաւոր խորէնին վրայ. քաջ երիտասարդը վերքերով լեցուն ա՛լ չէր կրնար հրացան պարպել, ու չափուշ մը, Հասան անունով, երբ կը տեսնէ թէ ա՛լ վախ չկայ, կը յառաջանայ ուրիշի մը հետ եւ ընկնուի կուրծքին տալով կ'անշնչացնէ ոգեուպառ երիտասարդը:

«Այսպէս ահա վերջացաւ կեանքն այն քաջ պատանին, կը գրէ Պատուելին, որ ապաղային մեծ բաներ կը խօստանար. զեռ պատանեկան հասակին մէջ ցուցըցած խանդովն ու կորովսովը քաջ տիտղոսի արժանացած էր:»

Խորէնի զիւղէն քարայրէն բիշ հեռու կը մնար: Կառավարութիւնը ստիպեց Պէյլէրեանի կինը, մայրը, երկու զեղերու քահանաները որ քարայրը մտնելով հոն ապաստանողները համոզեն անձնատուր ըլլալու: Սակայն ներսէն ասոնց չէին թողուր մօտենալ: Բայց վերջապէս չզի-

մանալով անոնց լաց ու կոծին, ներս առին:

Պատգամաւորները պաշարուողներուն աղաչեցին, պաղատեցան որ անձնատուր ըլլան, վասն զի փրկութեան ո՛ր եւ է հնարաւորութիւն չկար: Պատուելին աս զխաբ, բայց իրենց ընկերը որ փախած էր պիտի կրնար թերեւս միւս քաղաքներէն խուսիքի առնել եւ վազել գալ: Ինքն ու իրենները յանձնառու կ'ըլլային տասը օր անօթի ծարաւ զիմանալ մինչեւ որ օգնութիւնը հասնի, եւ ան ատեն՝ իրենք ներսէն, եկողները դրսէն, կրնային լաւ ջարդ մը տալ թշնամիին եւ կացութիւնը փրկել: Այս յոյսով Պէյլէրեան յանձնարարութիւն մը ըրաւ պատգամաւորներէն մէկուն: Ասոնք ձեռնունայն ետ դարձան:

Բայց դուրսէն պաշարուող ծանրացաւ: Երիզայէն օգնութիւն գալով պաշարողներու թիւը ստուարացաւ. միւս կողմէն՝ Հայերուն վրայ ճնշումները կրկնապատկուեցան: Զինուորներն ու սասիկանները իբր մարտկոց Հայերը կը զործածէին. զէնքերը անոնց ուսին յենած կ'արձակէին. այնպէս որ քարայրէն ելձէ հրացան ալ պարպուէր, փոխանակ թիրք զինուորին դալու, հայուն սիրաբը պիտի ծակէր: Երկու օր այս կացութիւնը շարունակեց. կառավարութիւնը կրկին անգամ կրնորը ու քահանաները քարայր խորկեց, սպանալով այս անգամ պատգամաւորներուն որ եւ թէ հրոսակները դուրս չհանեն, իրենք պիտի սպաննուին:

Պատգամաւորները մտնելով քարայր նկարագրեցին թէ ինչ սոսկալի աղէտներու պիտի մատնուին Արմուտանները եթէ հրոսակները անձնատուր չըլլան: Պէյլէրեան ա՛լ յուսահատելով ըսաւ.

«Լա՛ւ, լա՛ւ, թող ձեզի բան մը չըլլայ. ինչ որ եղաւ մեզմով եղաւ, եւ ինչ որ պիտի ըլլայ մեզի թող ըլլայ. ձեր կեանքերը թանկագին են, իսկ մերինները կանուխէն պատրաստ: Մենք մեզէն բան մը չէինք կրնար ընել. ձեր օժանդակութեամբ մեր զործերը կրնային արդիւնաւոր ըլլալ. իսկ դուք սկիզբի օրէն ի վեր փոխանակ մեզի օգնելու, մեր թշնամիին ձեռք տուիք, վատերդ՝ վատութեամբ, լաւերդ՝ վախկոտութեամբ: Այլ եւ ի՞նչ յոյս որ մնանք ալ օգտակար պիտի ըլլանք: Ուստի եղած չեղած մէկ հաշիւ է. մենք կը զոհուինք, դուք ազատուեցէք:»

Պէյլէրեան կը զգար նաեւ թէ կարելի պիտի չըլլար դրսէն օգնութեան ժամանում: Ա՛լ լերան այդ կորիւնները թուլցած էին, ուստի զէնքերու կարելուր եւ բարակ գործիքները կ'օտրելով մէկզի նետեցին: Կրնորն ու քահանաները հաւաքելով անոնք տարին յանձնեցին թշնամուն:

Յուզեալ, վիշաբ սրտերնին, հրոսակները զլսելիօր առաջնորդուեցան 500ի շափ մարդոց քով որոնց բոլորին ուշադրութեանը առարկան էին: Պէյլէրեանը պատուելով հեծցուցին ջորիի վրայ, ճինկօն՝ ուսէն վիրաւորուած, զըրին աւանակի վրայ, իսկ միտնորը կապեցին մէկ մէկու ու յաղթական թափօրը կ'ընթանար Արմուտան. եւ ամէնէն վերջը Խորէնի գիակը ջորիի մը վրայ բեռնուցած կը տանէին ամբոխին ետեւէն:

Ամբոխը գնաց Փոքր-Արմուտան կարգ առաւ հաճի

Ճանիկի տան առջեւ ուր ընդարձակ կալ մըն ալ կար. կապուածներն ու Հաճի պէյը ներսը սենեակի մը մէջ զըրին իսկ տան չորս կողմը ոտտիկանները կը հսկէին. տան դրան առջեւ գայմագամը իր պաշտօնակիցներուն հետ աթոռները նստած, կը յայտարարէր որ ուզողը կրնայ ներս մտնել եւ բանտարկեալները տեսնել: Հայերը խուսիք խուսիք ներս կը մտնէին եւ արտասուածօր աչքով ետ կը դառնային, թէ՛ ծեր, թէ՛ երիտասարդ, թէ՛ կին եւ թէ՛ երախայ: Ամէն Հայ արիւն կուշար, իսկ թիրքերը ուրախութեամբ լեցուած էին: Մէյ մըն ալ Խորէնի գիակն է բերին, եւ նոյն կալին մէջ ջորիին վրայէն ամուր մը ձգեցին: Բոլոր Հայերուն աչքերէն արցունքը անձրեւի պէս սկսաւ տեղալ, բայց յանցաւորի մը պէս կուշային, առանց համարձակելու բարձր ձայներ հանել:

Գայմագամը հրաման ըրաւ ու ձերբակալուածները ճամբայ հանեցին Երզնկա տանելու: Ու լացը կոծը տիրեց:

Ու Խորէնն ալ մեծ հանդէսով իբր նահատակ թաղեցին Ս. Թորոսի մատրան ետեւի կողմը: Գամբանական կնիք Արմուտաններու յեղափոխական շարժումին:

* *

Հիմա Պատուելին կը հանգչի Գահիրէ Մարմինայի գերեզմանատունը, ընկերներէն ոմանք թափառական հոս ու հոն, Պէյլէրեան իրեններովը բանտը: Յեղափոխական այս մաքրափայլ զէնքերը մթնշաղի մէջէն միայն ընդնշմարուած էին. յուսամ թէ այս յիշատակարանին հրատարակութիւնը լոյսի ճառագայթ մը արձակէ անոնց վրայ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Վ Ե Ր Ջ

Ա Ն Ա Դ Ո Ղ Ի Ա Գ Ո Ղ Է Ճ Ը

Մարզուանի Անագուրիա գողէճին վրայ, որ Փոքր-Հայքի մատուրական էն կարեւոր կեդրոնը կը ներկայացնէ, շատ շահեկան տեղեկութիւններ կը գտնենք Միշլերբի Հերբալի մայիսի թիւին մէջ:

1840ին էր որ Մր. Համլին առաջին անգամ կ. Պուլիս Պէպլէքի բարձունքներուն վրայ պզտիկ պարոց մը բացաւ, մասնաւորապէս հայ տղաց համար: Տարի մը ետքը աշակերտներուն թիւը 19 էր: Տրուած դասերն էին մաթեմատիք, բնական գիտութիւններ, պատմութիւն, իմաստասիրութիւն, եւ Աստուածաշունչի ուսումնասիրութիւն: 1845ին վարժարանը երեք շրջանաւարտ հանեց, որոնց մին Իզմիրի միսիոնարական տպարանը գնաց, եւ երկուքը ուսուցիչ եղան: 1847ին աշակերտներուն թիւը 35 էր՝ վեց միսիոնար ուսուցիչով. երեք տարուան աստուածաբանական դասընթացք մը աւելցուեցաւ վարժարանին վը-

րայ, և հոգեւորականութեան պատրաստելը վարժարանին զլիաւոր նպատակը եղաւ:

Որովհետեւ զժուար կ'ըլլար դաւաններէն աշակերտ զրիկ Պէպէքի վարժարանին համար, 1854ին յատկապէս աստուածաբանական դասընթացք մը հաստատուեցաւ Մարզուան, և յաջորդ տարին Եւզսիկա փոխադրուեցաւ: 1856ին այդպիսի դասընթացքներ հաստատուեցան նաեւ Էրզրում և Իլմիր: 1860ին, Եւզսիկայ աստուածաբանական վարժարանը Խարբերդ փոխադրուեցաւ: Պէպէքի կղերանոցը աւելց 1840էն մինչեւ 1861: Այդ վարժարանն ելան շատ անձեր որոնք հոգեւորական, կրթական և գրական ասպարէզներուն մէջ աշխատեցան: Այդ թուականին էր որ հարկ դատուեցաւ գործելու մէթոտները փոխել: Պէպէքի կղերանոցին յաջորդեց Բապէրդ Գոլէճը, որ միսիոնարներուն հետ ո եւ է կապ չունէր: Աստուածաբանական վարժարանը Պէպէքէն փոխադրուեցաւ Մարզուան, և 1865ին ութ աշակերտով դաստարան մը հաստատուեցաւ:

Տնտեսուցաւ թէ այդ դասընթացքին համար՝ նախապատրաստական վարժարան մը պէտք էր: Այդ նախապատրաստական վարժարանը քիչ քիչ ընդարձակուեցաւ, և հետզհետէ հսն զիմեցին շատեր որոնք փափաքող էին ընդհանուր կրթութիւն մը ստանալու, առանց հոգեւորականութեան պատրաստուելու փափաք ունենալու: Այսպէս հարկ եղաւ երկու վարժարանները իրարմէ բաժնել, և 1881ին նախապատրաստական վարժարանը՝ Մարզուանի Բարձրագոյն վարժարանը եղաւ, հինգ տարուան դասընթացքով, որոնց մին նախապատրաստական: Իսկ Աստուածաբանական վարժարանը, միւսէն անջատուած, փոխանակ երկուքի՝ երեք տարուան դասընթացք ունեցաւ և լսի աստուածաբանական կրթութիւն մը սկսաւ տալ:

1885ին, Մարզուանի տեղական Աւետարանական հասարակութիւնը միսիոնարներուն միացաւ՝ Բարձրագոյն վարժարանը առաջ տանելու համար, և 1886ին այդ վարժարանը վերակազմուեցաւ, դասընթացքները աւելցան, և անունը փոխուեցաւ Անագոյիա Գոլէճի: Ամերիկեան Պորտին վարչական մարմինն անդամները Գոլէճին հոգաբարձուները եղան՝ Մարզուանի տեղական անօրէն ժողովին օտար անդամները անուանելու և զօլէճին ելումուտը յանձնանկելու իշխանութեամբ: Մասաչուսեցի նահանգը վաւերացուց այս կարգադրութիւնը: Մարզուանի անօրէն ժողովը կը բաղկանայ տասը անդամէ, հինգը Ամերիկացի, զորոնք Ամերիկեան Պորտը կ'անուանէ, և հինգը տեղացի, զորոնք կ'ընտրէ Պոնտոսի Աւետարանական Ընկերակցութիւնը: Իւրաքանչիւր անգամ հինգ տարի պաշտօն կը վարէ: Վարժարանին անօրէնը Մարզուան բնակիչ միսիոնարներէն մին պէտք է ըլլայ. պաշտօնը հինգ տարուան համար է, ու կրնայ վերընտրուիլ: Գոլէճին ուսուցիչներուն կէսէն աւելին Հայ և Յոյն են:

1886ին Գոլէճին վերակազմութեան ատեն տեղական բողոքական հասարակութիւնը յանձն առաւ 1000 օտ. սս. կիի գրամազուլի մը կազմել, և տարուէ տարի վարժարա-

նին անուակին 60 սսի տալ իբր այդ գումարին տակտը: Այս հիւան վրայ էր որ Պոնտոսի Աւետարանական Ընկերակցութեան իրաւունք տրուեցաւ անօրէն ժողովին անդամներուն կէսը ինք ընտրելու: Պարտը միւս կողմէն հասանցաւ շէնքերը տալ, միսիոնար ուսուցիչներուն վարձքը ինք վճարել, և տարուէ տարի վարժարանին յատկացնել 1200 տուրք: Առաջադրեալ տեղական գրամազուլիւր չկազմուեցաւ, և տարեկան տոկոսին տարեկան վճարումները շատ անկանոն եղած են: Իսկ Պորտը իր յանձնառութիւնները կանոնաւորապէս կատարած է: Գոլէճին տարեկան եկամուտին մնացեալ մասը հոգացուած է գարոցական թոշակներէ և մասնաւոր նուերներէ: Քիչ քիչ գրամազուլի մըն ալ կազմուած է զօլէճին համար, և հիմակ 32,327 տուրի կը հասնի: Աշակերտներէն զոյացած տարեկան գումարը 6586 տուրք եղած է 1898-99ին:

Գոլէճը կը գտնուի առողջաւետ և զեղեցիկ վայր մը, միսիոնարական զեմին վրայ, քաղքին պատերէն ճիշդ գուրսը, ու մէկ կողմէն քաղքին վրայ կը նայի, ու միւս կողմէն՝ ընդարձակ գաշտին և բարձր լեռներուն: Հին շէնքը, որ երկար ատեն իբր Աստուածաբանական Գործանոց ծառայած է, զեռ կը գործածուի՝ մեծ մասամբ ինքնօրնութեան և արհեստագործական ճիւղերուն համար: 1887ին աւելցուած մեծ շէնքը զօլէճին յատկացուած է, ննջարաններով, մատուռով և լսարաններով: Այլ կողմէն վարժարանին համար գործածուած շէնքը հիմակ յատկացուած է մանուկներուն, որոնք տեսչուհիի մը խնամքին ներքեւ կը գտնուին, և 1894ին յատկապէս զեղեցիկ շէնք մը կառուցուած է այլ կողմէն վարժարանին համար: Ասոնցմէ զատ կան երեք միսիոնարական տուն: Ի նկատ առնելով վերջին երեք տարուան մէջ աշակերտներուն թիւին յարաճուն յաւելումը, զօլէճի համար նոր շէնք մը անհրաժեշտ է, որուն հոգը արդէն պատրաստ կայ:

Գոլէճին աշակերտներուն թիւը շատ տարի 120 էր: Բայց 93ի ջարդերէն անմիջապէս յետոյ այդ թիւը նշանակելի յաւելում մը կրեց, որ մինչեւ հիմա կը տեւէ: 98-99ի ցանկը 246 աշակերտ ցոյց կուտայ, և շատեր մերժուած են՝ տեղ չըլլալուն համար: Հայերուն թիւը 191 է, և Յոյներունը 55: Այս ուսանողները 55 տարրեր քաղքէ են և 11 տարրեր նահանգէ:

Գոլէճին էն կարեւոր և շահեկան մասերէն մին է ինքնօգնութեան ճիւղը: Ինչպէս անունէն կը յայտնուի, ասոր զլիաւոր նպատակն է տղաքները կարող ընել կրթութիւն ձեռք բերելու իրենց իսկ ջանքերով: Այս կերպով տղաքը առնական վարժութիւն մը կը ստանան իրենք իրենց վրայ վստահութիւն ունենալու, աշխատանքը յարգելու, գործնական մարդիկ ըլլալու, Ֆիլիքեական մարզանք ընելու և ճաշակի տիրանալու: Վարժարանին այս ճիւղը հիմակ ինքզինքը կ'ապրեցնէ, և վերջին տեղեկագիրը նոյն իսկ մուտքի յաւելում մը ցոյց կուտայ կըլին վրայ: Ուսանողներուն զրեթէ մէկ երրորդը իրենց ծախքը առաւել կամ նուազ կը հասնեն՝ վարժարանին այդ ճիւղին մէջ զանազան արհեստներու աշխատելով: Արհես-

սագործական վարժարան մը չէ առիկա, թէպէտ ուսանողներէն շատը մեծ վարժութիւն ձեռք կը բերեն գործնական արհեստներու մէջ եւ այսպէս իրենց գիտելիքը ապրեցնելու կարող կ'ըլլան:

Աշակերտներուն թիւը վերջին շորս տարուան մէջ աւելի քան կրկնապատուած է: Եւստ մարզիկ, որոնք շարքերէն բուրժուաւոր կործանած կ'երեւնային, իրենց զաւակները գոչէն կը զրկեն առաջուրնէ աւելի շատ: Աւսուցիչներու մեծ խնդրանք կայ, եւ Անագոլիա Գոչէնի շրջանաւարտները մասնաւորապէս շատ կը փնտռուին. գործի մարզիկն ալ կը գնահատեն անոնց կարողութիւնները եւ սրիշներէ նախամեծար կը համարին զանոնք: Պոնտոսիէն մեծ վաճառականը անցեալ տարի փափաքեցաւ բոլոր շրջանաւարտները ինք աննէլ իր գործերուն համար. ինք Բարձրագոյն վարժարան մը հաստատած է գոչէնի ծրարին վրայ, եւ գոչէնի շրջանաւարտները կ'առնէ իրը իր ուսուցիչները: Գոչէնի նախապատրաստող բարձրագոյն վարժարանները յառաջգիմելու վրայ են Երզրատ, Կեսաբիա, Թուրքաթ, Սըլազ, բացի Մարզուանի մէջ երկու վարժարանէ:

Ե Ր Կ Ո Ի Թ Ի Ի Ր Ք

Կ. Պոլսէն կը հաղորդեն Հիւանի պէյի եւ Լուծֆի աշայի մահուան լուրերը:

Առաջին անունը մեր յեղափոխութեան հետ արիւնոտ կապերով կապուած է: Գուս-Գարուի թողին ոտովիանապետն էր Հիւանի պէյ երբ սլայթեցաւ յուլիս 1896. անմիջապէս ստիկանութեան խորհրդին նախադահ անուանուեցաւ: Արիւնները զուրս ցցուած, շնադայի գէմըով այդ մարդը իր պաշտօնին յարմարագոյն անձն էր: 1890 յուլիս 1896 մինչեւ 1896 թիւրքերը Հիւանի ժանիքներէն անցան ամէն անոնք որ Զապիթիէն զուր կը տարուէին, հոնկէ անցնելու կամ հոն մնալու համար: Արտաքոյ կարգի սուր յիշողութեամբ օժտուած, միտքը պահած էր հազարաւոր ձեռքակալեալներու անունները, հարցաքննութիւնները, գէմքերը: Բանտը Հայոց տրուած տանջանքները ինք կը տնօրինէր, անոնց գործադրութեանը ինք կը նախադահէր: Իր սենեակին մէջ իսկ վատաբար ինքն իր ձեռքովը կ'ապտակէր, կը զանախոժէր Հայաստանցի Հայերը, որոնք ձեռքերնին կապկպուած, ոտականներէ շրջապատուած անկարող կ'ին իրենց զայրոյթը յայտնելու: Կոյր ու մուշտանդ իսլամն էր Հիւանի որ հաճոյք կը զգար իր ճիրաններուն մէջ քրիստոնեան խոշտանգելէ: Կ. Պոլսոյ մեծ կոտորածէն ետքը այլ եւս պաշտօնին վրայ մնալ անհնարին եղաւ. իբր կոտորածի Սպարթա խրկուեցաւ: Եթէ սատրազամութեան իսկ կոչուած ըլլար, զարձեալ պիտի չմիթարուէր, վասն զի միայն ստիկանապետի պաշտօնին մէջն էր որ կրնար գոհացնել իր իսլամական զգացումները: Այլ եւս Հայերը տանջելու անկարողութիւնը հիւսնեց զինքը. սրտին ցաւն սասկեցաւ:

Մէկալ Թիւրքն է Լուծֆի աղա, սուլթանին մտերիմ խորհրդակալներ: Պարզ գոնապան մըն էր առ մարդը Մահմուտ Նէտիմ փաշայի սատրազամութեանը: Երբ այդ հուշակաւոր փաշան աքսորի դատապարտուեցաւ, իր երկու աղաները չուզեցին բաժնուիլ իրենց տիրոջմէն, իրենք ալ անոր հետ մէկտեղ աքսորավայր Զագին: Աքսորէ վերադարձին Մահմուտ փաշան երբ մեռաւ, իր աղաները սուլթանին աղերսագիր տալով պաշտօն խնդրեցին: Սուլթանը որ զիտէր անոնց հաւատարմութիւնը իրենց տիրոջ համար, ուրախութեամբ պաշտը առաւ անոնք: Մէկը շուտ մեռաւ. միւրը Լուծֆի աղա՝ հետզհետէ սուլթանին վրտահութիւնը զրաւեց: Կը պատմեն թէ Համիտ ամէն առտու արթննալուն Լուծֆի աղան կը կանչէր, եւ կը խորհրդակցէր կարեւոր խնդիրներու մասին: Օսմանեան նախարարները ու քաղաքական և զինուորական բոլոր բարձրաստիճան պաշտօնաւարները բէշ բէշ վրայ կը բերէին այդ նախկին զոնապանին առջեւ: Պետութեան մը համար անկումի աւելի պարզ նշան մը: Լուծֆիի մահը Երզրազի պաշտին մէջ յեղափոխութեան պէս բան մը համարուեցաւ:

Խ Ա Ղ Ա Ղ Ո Ւ Թ Ե Ա Ն Հ Ս Մ Ս Ժ Ո Ղ Ո Վ Ը

Թիւրքիայէն զուրս գոնուող հայ գաղթականութիւնները ամէն կողմ գումարումներ կ'ընեն եւ Լա Հէյի Համաժողովին խնդրագրեր ու տեղեկագրեր կը հասցնեն:

Ամերիկայի Հայոց հոգեւոր հովիւ Տ. Սարաճեան եպիսկոպոս նամակով մը խնդրեց Միացեալ-Նահանգներու հանրապետութեան նախադահ Պ. Մաք Քինլիէն հրահանգ տալ Խաղաղութեան Համաժողովին ամերիկեան պատուիրակներուն որպէս զի իրենց միւս պաշտօնակիցներուն ուշադրութիւնն ալ հրաւիրեն Հայաստանի կացութեան վրայ, եւ զգացնեն անմիջական օգնութեան պէտքը: Ամերիկեան թերթերը կը հաղորդեն թէ Պ. Մաք Քինլի այս խնդրքը կատարած է:

—Լա Հէյի Համաժողովին անդամներէն մէկը հետեւեալ յայտարարութիւնը ըրած է. «Բազմաթիւ խնդրագրեր ընդունեցանք Հայ եւ Մակեդոնացի քովիթներէ եւ ուրիշներէ, բայց չենք կրնար ատոնք նկատողութեան առնել, վասն զի բոլոր պատուիրակներուն տրուած հրահանգն է Մուրադիէի կոմսին շրջաբերականին մէջ յիշատակուած խնդիրներէն անդին չանցնել: Ու Համաժողովը որոշած է ճշգրտապէս այս հրահանգներուն համաձայն գործել: Պատճառն այն է որ մենք որոշեալ նպատակակէտով մը Համաժողով գումարած ենք որմէ անդին չենք կրնար անցնել. մենք 1878ին Պերլին գումարուած Վիհժողովին չենք նմանիր. անիկ կրնար այդ բոլոր խնդիրները նկատողութեան առնել, վասն զի գումարուած էր վերաքննելու համար դաշնագիր մը որ Եւրոպայի աշխարհացոյցը փոխած էր: Բայց եւ այնպէս Համաժողովը որոշեց Յատուկ Յանձնախումբ մը կազմել որ ընդունի բոլոր

Թելադրութիւնները, առաջարկները, խնդրագրերը որոնք կրնան մեզի ուղղուիլ: Բայց այս կարգադրութիւնները ո՛ր եւ է կերպով պիտի չփոփոխեն կոմս Մուրալիէֆի շրջաբերականին պարունակած կէտերէն դուրս չելլելու կանոնն ալ որ ընդունած ենք:»

—Կ. Պոլսէն Սրահտարտի կը հեռագրեն. «Խաղաղութեան Համաժողովին առթիւ Թիւրքիոյ ծախքերը խիստ շատցան ու ելմտացոյցի մայիսի հասոյթները մեծապէս պիտի խոտեն: Լա Հէ գրկուած պատուիրակներուն ծախքը 5000 սոկի է այս ամիս. ասիկէ զատ ուրիշ ծախքեր ալ եղան: Մանաւոր քովիներն զրկուեցան զանազան տեղուանք, յեղափոխական առջնորդները համոզելու համար որ գոնէ Համաժողովին գումարման ատենը ետ կենան Դրան պէմ ցոյցերէ: Էլիաս Մալթիւ Բարիզ դնաց 1300 սոկիով: Ահմէտ փաշա Երիտասարգ Թիւրքերուն մէջ է 2000 սոկիով. Տատեան էֆէնտի եւ Քէլէկեան Հայերուն զրկուեցան 700ական սոկիով. Թալալ եւ Նուվալ պէյիքը 300ական սոկիով յալպանական նիզակակցութեան մէջ պաշտօն ունին: Այս գումարները զրկուող պաշտօնեաներուն համար են անձնապէս. իսկ իւրաքանչիւրին անսահման վարկ բացուած է դործադրելու համար իրենց յանձնուած պաշտօնը որ է կաշառել Սուլթանին կառավարութեան հակառակող զանազան շարժումներու պարագլուխները:»

—Երիտասարգ Թիւրքերն ալ Համաժողովին դիմած են, Համիտի բռնակալութեան սահման մը դնելու խնդրանքով:

—Պուլկարիոյ Հայերը գումարումներ բնելով իրենց կողմէ Պ. Մինաս Չերազը Լա Հէ խրկեցին Համաժողովին տեղեկագիր մը ներկայացնելու համար Հայոց վիճակին մասին: Թաւ կը հաղորդէ թէ Պ. Չերազ բանախօսութիւն մը ընելով Լա Հէ ըսած է թէ խաղաղութեան Համաժողովը իր նպատակին հասնելու համար պէտք է որ Հայաստանի, Մակեդոնիոյ եւ Ալբան-Լորէնի խնդիրները կարգադրուին: Թաւ կ'աւելցնէ.

«Թէեւ այս դիմումներէն ո՛ր է գործնական օգուտ մը պէտք չէ սպասել բայց Հայաստանի վիճակին նկարագրութիւնը խորին սպաւորութիւն մը թողած է ժողովականներուն վրայ:»

—Տէյի Նիոզգի Լա Հէյի թղթակիցը ընդարձակօրէն խօսելով Պ. Չերազի պաշտօնին վրայ, հետեւեալ տեղեկութիւններ կը հաղորդէ. «Քանի մը օր առաջ պաշտօնական յայտարարութիւն մը ծանուցած ըլլալով թէ Համաժողովին նախագահը ո՛ր եւ է խնդրագիր պիտի չընդունի, Պ. Չերազ վարդեաութեան մը պիմեց հայկական խնդրագիրը Սթալ Պառոնին (առտական ներկայացուցիչ եւ Համաժողովին նախագահ) հասցնելու համար: Համաժողովին բացումին օրը Պ. Չերազ վարձեց Լա Հէյի էն գեղեցիկ կառքը, եւ Պոլիվարի պատուանշանը կուրծքէն կախած, ուղղակի Համաժողովին գումարումին պաշտօնատունը գնաց: Բայց զրան առջեւ թող չտուին որ անցնի: Այն ատեն Պ. Չերազ մեծ պահարան մը ցոյց տուաւ զինուորներուն որոնք զինքը բարեկեցին եւ թող տուին որ անցնի երթայ: Կառքը զէպի Դեպպաններու սանդուխը յառաջացաւ. Պ. Չերազ վեր ելաւ եւ պահարան մը տուաւ

սպասարան ըսելով թէ պաշտօնական թուղթեր կը պարունակէ նախագահին համար: Ետեւ Սթալ մը սպասեց տեղեկութիւն ստանալու համար. յետոյ մէկը խրկեց. ան ալ ետ դարձաւ պատասխան բերելով որ Պ. Սթալ երբեք պիտի չընդունի Պ. Չերազը: Այս վերջինս յիշեցուցած էր Սթալ Պառոնին որ Կորչաքօֆ իշխանը 1878 ապրիլ 9ին Լորա Սուլպէրիի գրելով յայտարարած էր թէ կայսերական Դահլիճը «միշտ իր յիշողութեան առջեւ ունի պատմութեան իրեն յանձնած խնամակալութեան առաքելութիւնը քրիստոնեաներուն բարորութեանը համար առանց խտրութեան ցեղի և գաւանանքի:» Պատգամաւոր մը իմացուց Պ. Չերազի որ Սթալ Պառոնը իր պաշտօնակիցներուն եւ ոչ իսկ խօսած էր իր խնդրագրին վրայ: Խնդրագիրը երեւան կը բերէր նորանոր հայկական սոսկալի աղէտներ: Պ. Չերազ իւրաքանչիւր պատգամաւորի գրած է եւ շատերէ քաղաքավարի պատասխաններ ստացած է:

«Սուլթանը Կ. Պոլսոյ հոլանտական զեսպանին բողոքագիր մը խրկած է ընդդէմ Պ. Չերազի և Երիտասարգ Թիւրքերուն Լա Հէ ներկայութեանը, եւ առաջարկած է որ եթէ անոնք Հոլանտայէն արտաքսուին ինքն ալ ճոխի իսլամական խնդիրները Հոլանտայի նպաստաւոր կերպով կը կարգադրէ: Սուլթանին գաղտնի ոստիկանութեան պետ Ահմէտ փաշա ճէլալտտին ճամբայ ելած է Լա Հէ գալու:»

«Պ. Չերազ, կը յայտարարէ Տէյի Նիոզգի թղթակիցը, առանց պատրանքի եկած է, և պիտի մեկնի առանց յուսախաբութեան:»

ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն Թալալին կը հեռագրեն թէ Արեւելեան Անաստուլի ընկերական, տնտեսական եւ վարչական կացութիւնը ո՛ր եւ է ժամանակէ աւելի վատթարացած է:

—Մշակի մէջ կը կարգանք. «Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են որ Կ. Պոլիս գնացին Ժընէվի Հայկական կոմիտէի անդամները, որոնք նպատակ ունին բանակցիլ թիւրք կառավարութեան հետ՝ Հայոց դրութիւնը բարւոքելու միջոցների մասին: Այդ բանակցութիւնները կը վարեն Արթին-փաշան եւ Բերայի նահանգապետ Էնվէր փաշան: Կոմիտէի պատգամաւորները զբաւոր խոստմունքներ տուեցին թէ Կոմիտէաը հանդիսա կը մնայ եւ բռնի միջոցների չի դիմի:»

—Կ. Պոլսոյ լրագիրները կը հաղորդեն թէ սուլթանը Տատեան Արթին փաշային Իֆրիխարի շքանշանը տուեք է «ի վարձատրութիւն իւր բարւոք ծառայութեանը»:

—Սուլթանին թախանձագին խնդրանքին վրայ ուսական զեսպանատունը հաւանեցաւ յետաձգել զաղթական Հայոց վերագարձի խնդիրը մինչեւ որ առտական զեսպան Պ. Չինովիէվ յանիսին վերադառնայ: Սուլթանը մասնաւորապէս կը վախնայ որ վերագարձող Հայերը խոտուլութիւններ կը յարուցանեն, վերստանալու համար իրենց հողերը որոնք կայսերական իրատէսով Գիւրսեբուն աւրուած են: